№ 66 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼԻ № 66

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Բարձր Հովանաւորութեան տակ գտնվող

„Պատերազմից Վնասվածներին Օգնող Հայկական Կենտրոնական Կոմիտէն" և ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ., որոնք գործում են միացած, շարունակում են ընդունել նուիրատուութիւններ փողով և իրերով հայ գաղթականների օգտին։

Նուէրները ուղարկել հետևեալ հասցէով՝ 1) Կոմիտէտի գանձապահ պ. Գ. Ծաւրինեանին, Тиф. Ком. Банкъ. 2) Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. Խորհրդին, Абасъ-Абадская площ., № 7. 3) «Հորիզոն»-ի խմբագրութեան, իսկ իրերը միայն՝ Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակի հասցէով։
տո. (օ. մ.) 181. 5—3



ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Բագուի Հայ Դերասանական Ընկերակցութիւնը
Գ. Ի. ԱՄԻՐԱԳՕԻ տնօրինութեան ներքոյ
Այսօր, չորեքշաբթի, ապրիլի 1-ին
Կը ներկայացնէ երկրորդ անգամ՝ մեծ աջողութիւն ունեցած՝
◆ ԱՆՄԱՀ ՐԱՖՖԻԻ ◆
ԴԱՒԻԹ-ԲԷԳԸ
Պատմ. դրամա 6 գործ., փոխ. Ց. Զարիֆեանի։

I պատկեր. Կենդանի մարդկանց խարոյկը. Թորոս-իշխանի այցը Ֆաթալի-խանին, և գերիների ազատութիւնը։
II պատկեր. Պատանի Դաւթի փախուստը դէպի Վրաստան. Սիւնեաց թագաւորի սուրը Դաւթի ձեռքում։
III պատկեր. Դաւիթ-Բէգը Վրաստանի զօրաւոր. տանջված հայրենիքի կոչը և հայ իշխանների միութիւնը։
IV պատկեր. Դաւիթ-Բէգի յաղթական մուտքը Տաթև. հայ կանանց պատգամաւորութիւնը. հայ զօրապետների երդումը։
V պատկեր. Չէյվայի սարօտում կռիւ. Մելիք-Ֆրանգիւլի թակարդը։
VI պատկեր. Հայ բանակի յաղթանակը. Թորոս-իշխանի մահը. Սիւնիի ազատութիւնը։

3-դ գործողութեան ընթացքում, Դաւիթ-Բէգի տանը խրախճան, կովկասեան պարեր։
Դաւիթ-Բէգի դերը կը կատարէ պ. Զարիֆեան։
Մասնակցում է ամբողջ խումբը։ —◆— Տեղերի գները սովորական են։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տնօրէնութեան լիազօր, ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ

ԱԶԴ.—Վաղը, հինգշաբթի, ապրիլի 2-ին կը ներկայացվի Յովհ. Զարիֆեանի բենեֆիսին՝ երկրորդ և վերջին անգամ Րաֆֆիի «ԽԵՆԹԸ»։

Ուրբաթ, ապրիլի 3-ին, վերջին ներկայացում—բենեֆիս տիկ. Դուրեան-Արմէնեանի. կը ներկայացվի Մուրացանի «ՌՈՒԶԱՆ» կամ հայրենասէր օրիորդ։

Բոլոր ներկայացումների տոմսակները վաճառվում են։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ԴԱՐԴԱՆԷԼԻ ԵՒ ԶՄԻՒՌՆԻԱՅԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 մարտի

ԱԹԷՆՔ.—Պատերազմական գործողութիւնները Դարդանէլում և Սարոսի ծոցում շարունակվում են անընդհատ. ընդհանրապէս ռմբակոծութիւնը արգելք է լինում թիւրքերին աշխատել։

ՍՈԼՈՒՆ.—Միտիլէնից հեռագրում են. «Դաշնակից նաւատորմը վերջին օրերը նորից սկսեց երբեմն ռմբակոծել Դարդանէլը, մանաւանդ թիւրքերի նոր խրամատները։ Դաշնակից բոլոր մեծ ռազմանաւերը մեկնեցին անորոշ ուղղութեամբ»։

ԱԹԷՆՔ.—Զմիւռնիայից տեղեկացնում են, որ բերդում և լեռան վրա դրված են նոր մարտկոցներ։ Երկու երկաթուղագիծ քարածուխի բացակայութեան պատճառով հրաժարվում են տեղափոխել ճանապարհորդներին։

Զմիւռնիայի պաշարումը դաշնակից նաւատորմը ուժեղացրել է այն օրից, երբ Թիւրքաց մի ականանաւ կարողացաւ անցնել Դարդանէլից՝ բարօն Կլուկի հրամանատարութեամբ։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 մարտի

ԱԹԷՆՔ.— «Մ. ու Ա.» կոմիտէտը դեռ մնում է դրութեան տէրը։

Յայտարարված է ընդհանուր զօրահանութիւն։

(Լրագիրներից)

◆ Դաշնակից զօրքերը Գալիպոլիում զօրք են ափ իջեցրել, որը և ոչնչացրեց թիւրքական մի մարտկոց։

◆ Զմիւռնիայում նոր բերդեր են կառուցանվում։ Քաղաքում տիրում է սարսափ։ Թիւրք զօրքերը զբաղված են կողոպուտով։

◆ Կ. Պօլսի իտալական դեսպանը հրաւիրեց Բ. Դրան ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ մայրաքաղաքում սպասվում է քրիստոնեաների կոտորած։

◆ Վերջերս Թիւրքիա է ուղարկված բուլգարական կառավարական հանքերից 1000 վագօն քարածուխ բացի դրանից, ծախված է 400 վագօն ցեմենտ։

◆ Կ. Պօլսի հետ հեռագիրը չէ գործում Ռումինիայի և Բուլգարիայի կողմից։

◆ «Թայմսը» յայտնում է, որ Դարդանէլը պաշտպանող 900 թնդանօթներից 300-ը լռութեան են դատապարտվել։

◆ Պետրօգրադի քաղաքագլուխ կոմս Տօլստոյը ստացել է նամակ Փարիզի հայկական կոմիտէտից, որով երախտագիտութիւն է արտայայտված հայ փախստականներին օգնող Պետրօգրադի կոմիտէտին։ «Ռուս ժողովրդի վեհանձն վերաբերմունքը դէպի հայերը,—ասված է նամակում,—մարդկութեան և հայ ցեղի պատմութեան վճռական, հանդիսաւոր ժամին հարիւրապատիկ աւելացնում է ի սփիւռս աշխարհի հայերի սէրը»։ Նամակն ամբողջովին տպվեց «Մշակում» երէկ։

◆ Պետրօգրադի կոմիտէտի միջոցները շատացնելու համար հիմնվում է հայ-ռուսական շքադրամ։

◆ Կ. Պօլսում խուժանը ընդհարումներ է ունենում ոստիկանութեան հետ քաղցի պատճառով։

◆ Գեներալ Սանդերսին կովկասեան զօրաճակատից Դարդանէլ տեղափոխելուց յետոյ, շատ թիւրք յայտնի օֆիցերներ վերադառնում են կովկասեան զօրաճակատը, իսկ գերմանացի օֆիցերները մեկնում են Սանդերսի զօրաբանակը։

ՄՈՒՂԼՈՒՐ-ԽՈԹ

(Պղնձի հանքերում)

II

Մուղլուրի մէջ բանում էին ընդհանրապէս 2000 բանուոր, որից 1000-ը Թիւրքիայից էին, իսկ մնացեալը տեղական ժողովրդից և մինգրէլ քրիստոնեաներից։ Կային մէջները նոյնպէս սակաւաթիւ ղարաբաղցի և գանձակեցի հայեր։ Սուրմէնեցի բանուորները լաւ հիւսն լինելով՝ աշխատում էին միմիայն փայտի շինութիւնների վրա։

Պէտք է իմանալ, որ Մուղլուր ջուրը գալիս է Մուղլուրի լեռներից և մօտ քսան վերստ երկարութեամբ ոռոգում է Մուղլուրի ձորն ու թափվում է Ճորոխ գետը։ Պղնձի հանքը գտնվում է Զանգու գիւղում, և Մուղլուրի շրջապատում 32 գիւղ կայ, որոնք բոլորն էլ խօսում են վրացերէն, որը ճան լեզուից տարբերվում է։ Երկիրն անտառոտ է, որի մէջ նկատելի է եղնին (ель)։ Թէև առաջ լաւ ծխախոտ էին մշակում, բայց հանքերի շնորհիւ թուլացած էր այդ մշակութիւնը։

Այն արդուինցիները, որոնք Մուղլուր խանութ ունէին, — Մինաս Մինասեան, Աբրահամ Փուչինեան, Պետրոս Մատիկեան, Պետրոս Գոհարեան, Օնիկ Մամուլեան և ուրիշները—այդ բոլորը շարունակ նկատելով իմացնում էին Արդուին իրանց ազգական-բարեկամներին, որ նրանք զգուշանան և հեռանան Թիւրքիայից մինչև պատերազմի վերջը։

Հոկտ. 27-ին լուր է հասնում Արդուին, թէ օսմ. բանակն հասել է Մելօ։ Այս լուրը սարսափ է սփռում, քանի որ հարաւից Արդուինին սպառնում են մուղլուրցիները, արևմուտքից՝ Մելօյից էլ օսմ. բանակը։ Գաւառապետը օրջօխեցի Օսմանին լրտես է ուղարկում Մելօ, որ տեղեկութիւն բերէ։ Օրջօխեցին գալիս և յայտնում է, թէ Մելօյում կանգնած է 5000 հոգուց բաղկացած մի բանակ։

Դրութիւնը օր օրի վրա ճգնաժամային է դառնում։ Լուր է հասնում, թէ թիւրքերի չետաներն անցնում են օսմ. Խօթից ռուսական Խօթ, Արդանուշի ետևը։

Երբ նոյեմ. 2-ին սաստիկ նեղացրել էին հրոսակները հանքերի պրիստաւ Կասիմ-բէյ Շիրային, սա դիմել էր իշխանութեանը և օգնութիւն խնդրել։ Վերջինս հրամայել էր Արդուինի 700 կօզակներից 200 հոգի ուղարկել Մուղլուր։

Դրութիւնն այնքան խստացել էր Մուղլուրի ձորում, որ օսմ. հրոսակները նկատելով թէ Մառուլեանց Օնիկը՝ Ղազարի որդին՝ ծախել է ապրանքը, փողերը մէջքին կապել փախչում է Բաթում, վրա էին տուել և կողոպտել էին 7500 ր. դրամը։ Նոյն իսկ կամեցել են սպանել, սակայն գիջելով նրա թախանձանքներին և ստանալով նրա վերջին դրամները՝ բաց են թողել։

Մուղլուր եկած հրոսակներն այնպէս գրոհ տուեցին, որ մեր կօզակները չը կարողացան մտնել այդ ձորը և բարձրանալ օսմ. լազերի շինած դիրքերը։ Արդուինի լեռներից այնպիսի սպառնալիք կարդացին, որ ահաբեկեցին անզէն հայ ժողովրդի։ Ժողովրդից ով որ կարողացաւ ամեն բան թողնել ու սոսկ գլուխն առնել փախչել, նա ազատվեց. մնացողները իրանց ընտանիքով, գոյքով կալուածներով գերի մնացին օսմ. լազերի ճանկերում։

Ոչ օսմ. բանակը ահաբեկեց մեր ժողովրդին, ոչ էլ օսմ. լազերի անգթութեան սարսափը, այլ գերմանացիների սիստեմով տարածված սարսափելի սուտերը, որոնք ամեն ինչ հարիւր անգամ մեծացրած սփռում էին ամեն կողմ ու շշմեցնում էին։

Այս տարածած սուտերի սարսափների ներգործութիւնով՝ մեր երկիր խուժած օսմ. լազերը օսմ. սպաների և տեւտօն ինստրուկտորների հետ այնքան առաջացան, որ նոյեմ. 5-ին մտան Արդուին։

Ատրպետ

ԹՌՈՒՑԻԿ ՄՏՔԵՐ

XIV

Ինչպէս նկատեցինք, ռուս-թիւրքական պատերազմի 5 ամիսը բոլորեց մարտի 18-ին։ Ներկայ ռուս-թիւրքական պատերազմը շատ խիստ կերպով տարբերվում է անցեալում մղված բազմաթիւ պատերազմներից։ Այժմեան պատերազմում առաջին անգամ Թիւրքիան հանդէս եկաւ իբրև յարձակվող կողմ և փորձեց մղել յարձակողական պատերազմ, մինչդեռ անցեալում մղած բոլոր պատերազմներում Թիւրքիան հէնց սկզբից ստիպված է եղել նահանջել իր երկրում, և մասնակի պատերազմական փոքրիկ աջողութիւնները ոչ մի նշանակութիւն չեն ունեցել գլխաւոր պատերազմական գործողութիւնների համար։ Մինչև իսկ թիւրքական զօրքերի մասնակի առաջխաղացումը անցեալ պատերազմներում տեղի է ունեցել թիւրքական երկրի սահմաններում և վերջացել է չարաչար պարտութիւններով։

Արդէն գաղտնիք չէ, որ թիւրքական ներկայ պատերազմական գործողութիւնները կատարվում են գերման զինուորականների ծրագրով ու խորհուրդներով։

Թիւրքիան 70-ական թւականներից ընկաւ գերմանական պետութեան ազդեցութեան տակ և աստիճանապէս այդ ազդեցութիւնը այնպէս զօրեղացաւ, որ ներկայումս կարելի է համարձակ պնդել, թէ Թիւրքիան միայն անունով գոյութիւն ունի։ Երկրի կառավարիչներն ու հրամայողները գերման բարձրաստիճան զինուորականներն են։

Սակայն շատ վաղուց՝ մինչև իսկ հռչակաւոր ռազմագէտ Մօլտկէի միջոցով կատարված զինուորական վերանորոգումները, որոնք յետագայում և մինչև ներկայ օրերը շարունակվեցին, ոչ մի արդիւնք չը տուին և մի անգամ ևս հաստատեցին այն ճշմարտութիւնը, որ մահմեդական-տեօկրատ պետութիւնները մատնված են անհետացման՝ պատմական ասպարէզից։

Հինգ ամիս առաջ պատերազմական գործողութիւնները, երբ Թիւրքիան հրապարակ եկաւ գործնականապէս իրականացնելու գերման զինուորականների մշակած ռազմագիտական ծրագիրը, պարզեցին, որ հիւանդ մարդը մօտ է ոչ թէ վերածնման, այլ մահվան, որ ոչ մի հնար, միջոց չը կայ նրան փրկելու։ Հիւանդ մարդու ախտից մինչև իսկ վարակվեց նրան բուժել ցանկացող ու բժշկող Գերմանիան...

Գերման զինուորականները, հետևելով ռազմագիտութեան այն օրէնքին, որ զուտ պաշտպանողական պատերազմը վերջանում է միշտ պարտութեամբ, կազմեցին Թիւրքիայի համար յարձակողական պատերազմի ծրագիր՝ իբրև գրաւականն աջողութեան։

Այդ նպատակով Թիւրքիային դրդեցին գերման ղեկավարները որոշ նախապատրաստական միջոցների ձեռնարկել՝ ստեղծելու յարձակողական պատերազմ մղելու նպաստաւոր պայմաններ։

Աբդիւլ Համիդը 1907 թւին զօրքեր ուղարկեց Պարսկաստանի սահմանամերձ վայրերը՝ գրաւելու որոշ կէտեր։

Այդ կատարվում էր այն հիման վրա, որ դեռ չէր վերջացել շատ տարիներ առաջ սահմանային վէճը Պարսկաստանի հետ։ Թիւրքիան Ղօթուրի գաւառը համարում էր իրանը։ Այս համարձակ քայլը, որ արվեց ինքնագլուխ, առանց Պարսկաստանի հովանաւորողի՝ Ռուսաստանի և Անգլիայի գիտութեան, ծածուկ կերպով պաշտպանում էր Գերմանիան։ Պարսկաստանն անցնող թիւրքական զօրքերի մէջ կային, ինչպէս յետոյ հաստատվեց, ծպտեալ գերմանացի օֆիցերներ, որոնց առաջնորդութեամբ ու ցուցմունքներով թիւրքական զօրքերը պարսկական հողի վրա գրաւում էին ռազմագիտական կարևոր նշանակութիւն ունեցող կէտեր։

Թիւրքական զօրքերի վերոյիշեալ շարժման ռազմագիտական նշանակութեան մասին գրվեց 1907 թ. «Մշակի» 136-դ և 137-դ համարներում։ Այն ժամանակ մենք պնդում էինք, որ Ատրպատականի մի մասի գրաւումը Թիւրքիայի կողմից՝ ունի լոկ ռազմագիտական նպատակ ապագայ ռուս-թիւրքական պատերազմի համար, որովհետև ծրագրվել է մղել յարձակողական պատերազմ այդ կողմից։ Այդ ուղղութիւնը ընտրելու պատճառն այն էր, որ գրաւած վայրերի մահմեդական ազգաբնակութիւնը մեծ չափով կարող է նպաստել թիւրքական զօրքերի արշաւին։

Եւ ահա ներկայ պատերազմին տեղի ունեցած թիւրք զօրքերի յարձակողական գործողութիւնները Ատրպատականի և Աջարիայի կողմից սկզբում անարգել առաջ մղվեցին։ Եւ եթէ թիւրքական զօրքերի առաջխաղացումը սկզբում աջողութիւն ունեցաւ, այդ՝ ռուսական զօրքերի նախօրօք կատարված ռազմագիտական նահանջն էր պատճառը։

Ռուսական զօրքերը ռազմագիտական նահանջը վերջացնելուց յետոյ՝ նորից անցան յարձակողական պատերազմին։ Թիւրքական զօրքերը չարաչար պարտութիւններ կրեցին և վանվեցին իրանց գրաւած վայրերից թիւրքական հողը։

Այժմ Թիւրքիան պէտք է մղէ լոկ պաշտպանողական պատերազմ իր երկրի վրա։

Ահա այս ամենը մի անգամ ևս նորից հաստատեց այն, որ Թիւրքիան ոչ թէ հիւանդ է, այլ մահամերձ է, որ նա երբէք ընդունակ չէ մղելու յարձակողական պատերազմ, իսկ պաշտպանողական պատերազմն էլ ինչպէս անցեալում, այժմ էլ վերջանալու է նրա համար չարաչար՝ կորստաբեր պարտութեամբ։

Գերմանիան, որ նետեց Թիւրքիային պատերազմ, ոչ այնքան նրա կատարելիք ռազմական դերի համար արաւ, այլ որքան այն նպատակով, որ Թիւրքիայի կամ Մերձաւոր Արևելքի խնդիրը կարող է դժգոհութիւն ձգել դաշնակիցների միջև, երբ Թիւրքիայի բաժանման հարցը մէջտեղ գայ, որից ինքը կարող է օգտվել։ Սակայն դաշնակիցները այնպիսի եռանդով ու պատրաստակամութեամբ են մղում պատերազմական գործողութիւնները Թիւրքիայի դէմ, որ հաստատապէս երաշխիք է տալիս ասելու, թէ դաշնակիցները կատարեալ համաձայնութեան մէջ են Թիւրքիայի ճակատագրի օրոշման հարցում, և Ռուսաստանը շուտով հասնելու է իր պատմական կոչումից բղխած վեհ նպատակին։

Ա. Նազարբէկեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նէմանի արևմտեան կողմում մարտի 29-ին շարունակվեցին մասնաւոր բնոյթ ունեցող կռիւներ։

Օսովէցի մօտ, նաև Եդվաբնօ շրջանում և Պիսսայի ու Օմուլէվի միջև տեղի էր ունենում թնդանօթաձգութիւն։

Գերմանացիք փորձեցին ռմբակոծել Շաֆրանկա գիւղը, բայց աջողութիւն չունեցան։

Կարպատներում Ռոստոկի ուղղութեամբ մենք մարտի 28-ին վանեցինք մօտիկ տարածութիւնից թշնամու խոշոր ուժերի, որոնք կրկնակի յամառ յարձակումներ էին գործել Ուժոկի լեռնանցքի մօտ, որը տակաւին թշնամու ձեռքումն է։ Մենք մասամբ առաջացել ենք։ Այստեղ մենք ձեռք ենք ձգել 3 թնդանօթ ու 700 գերի։

Ռօսօխաչ-Օրավչի-Կօզիւվկա-Ռօժանկա զօրաճակատում մենք վանեցինք թշնամու յարձակումները, նրան պատճառելով խոշոր կորուստներ։

Սուվալկի շրջանում մենք ձեռք ձգեցինք 4 գերմանական գնդակացիր և մի քանի տասնեակ գերի։ Միևնոյն օրը Օսովէցը ռմբակոծվեց առ. ժամը 8-ից մինչև երեկ. ժամը 6-ը 8 դիւյմանոց գաւբիցներով։

Եդվաբնօյի շրջանում ուժեղ կռիւ է։

Ստրին Նարէվում մենք ձեռք ձգեցինք մի աէրօպլան երկու օդագնացների հետ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 մարտի

ՓԱՐԻԶ.—Պաշտօնապէս հաղորդվում է. «Լոյս մարտի 29-ի գիշերը գերմանացիք յարձակում գործեցին Ալբէրի հիւսիսային կողմում, Անկր գետի երկու ափերում, Ֆամէլի մօտ և Տրէպվալի անտառում գտնվող մեր խրամատների դէմ, բայց վանվեցին ձեռնամարտից յետոյ։

«Արգօնեան բարձրաւանդակի վրա յամառ կռիւ սկսվեց ամբողջ գիշերվայ ընթացքում, որի ժամանակ մենք ոչնչացրինք թշնամու զինապահեստը և գրաւեցինք 300 մետր խրամատներ, պահելով մեր ձեռքում՝ գրաւված տարածութիւնը, չը նայած թշնամու երկու հակայարձակման։

«Մարմօրի անտառում գերմանացիներին գիշերով աջողվեց խլել մեզանից նախօրեակին իրանց կորցրած խրամատները, բայց և այնպէս մեր ձեռքում մնում են բոլոր 5 դիրքերը։

«Լեպրէտրի անտառում մեր թնդանօթները վանեցին թշնամու երկու յախուռն յարձակումը։

«Մեր աէրօպլանները 155 ռումբ նետեցին ծովային կայարանի և գործարանի վրա Բրիւգգէում»։

ՓԱՐԻԶ.—Պաշտօնապէս հաղորդվում է. «Գերմանացիք մարտի 26-ին փորձեցին ետ խլել Բուէժուրի փոքրիկ բերդը, որ մենք վերցրել ենք փայլուն յարձակումներից յետոյ։ Գերմանական զօրքերը իրանց նպատակին հասնելուց առաջ ոչնչացան մեր գնդակացիրների կրակից և քչերը վերադարձան իրանց խրամատները։ Երկրորդ յարձակումով թշնամուն չափազանց մեծ կորուստներով աջողվեց հասնել բերդի մուտքի արևմտեան կողմից ամենածայրի խրամատին։ Այստեղ գերմանացիք կարողացան ձեռք ձգել որոշ տարածութիւն Բաջօի մօտ, որի վրա նրանք դժուարութեամբ մնացին գիշերվայ ընթացքում։ Միաժամանակ գերմանացիք ուղղեցին իրանց կրակը միւս խրամատների դէմ։ Սակայն, մեր արտիլէրեան և հետևակ գնդերը ընկճեցին գերմանացիների եռանդը։ Մարտի 27-ին մենք վանեցինք թշնամուն բերդի այն մասից, ուր նրանք դեռ մնում էին։

«Բելգիայում թնդանօթային կռիւներ են»։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 մարտի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գերմանիայի և Նիդէրլանդիայի միջև յարաբերութիւնները լարված են:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մատակարարական գործի միջվարչական մասնաժողովի վերջին նիստում բաւարարութիւն տրվեց մի շարք միջնորդութիւնների՝ յատկացնելու գումարներ ազգաբնակութեան համար սերմացու ու ուտելիք գնելու: Ի միջի այլոց յատկացված է մի միլիօն ռուբլի Կովկասի փոխարքային:

Բէլգիական արտակարգ պատուիրակութիւնը այցելեց մինիստրների խորհրդի նախագահին, զինւորական և արտաքին գործերի մինիստրներին:

ՊԱՐԻԶ. — Վերադարձաւ գեներալ Պօ: Հոծ ամբոխը ողջունեց փողոցում գեներալին:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Ամերիկացի 11 գթութեան քոյրեր բժշկի ուղեկցութեամբ մեկնեցին Պետրօգրադ, որպէսզի անցնեն ռուսաց զօրաճակատը:

ԱՄՍՏԵՐԴԱՄ.—«Ցալաբա» շոգենաւի ձերբակալման առիթով «Տելեգրաֆ» լրագիրը տպել է այն աստիճանի խիստ յօդուած Գերմանիայի հասցէին, որ գերմանական դեսպանը ստիպված եղաւ բողոք յայտնել այդ առիթով Նիդէրլանդական կառավարութեանը:

ԼՕՆԴՕՆ. — Բրիտանական «Ուայֆերէր» շոգենաւը ենթարկվեց գերմանական ստորջրեայ նաւի յարձակման և բերվել է Կվինստօուն:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը պարզել է, որ պատերազմի առաջին 8 ամիսների ընթացքում ստացվել են 36,000 խնդրագիր ռուսահպատակութիւն ընդունելու մասին: Ընդունվել են 3000 սլաւոն, այլ ազգութիւններից՝ 246:

◆ «Ֆիգարօն» հաղորդում է, որ պապը մերժել է Ֆրանց-Յովսէփ կայսրի խնդիրը՝ հանդիսանալու միջնորդ կռւող կողմերի միջև:

◆ «Թայմսին» հաղորդում են իբրև լուր, թէ Գերմանիան կամք է արտայայտել Ամերիկային՝ սկսելու բանակցութիւններ հաշտութեան մասին status quo ante bellum-ի պայմանով:

◆ Ռուս-բուլղարական մասնաժողովի բանակցութիւնները ուղղակի երկաթուղային հաղորդակցութեան մասին վերջացան համաձայնութեամբ, որ ստորագրվեց երկու կողմից:

◆ Կարպատներում ռուս զէնքը աջող գործում է: Ճգնաժամը լուծվելու է շատ շուտ:

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պետրօգրադից. «Ռադօսլավօվի կառավարութեանը հասկանալ տվեց, որ Բուլղարիայի ամեն նոր քայլը, ուղղված Սերբիայի դէմ, կը նկատվի Ռուսաստանի կողմից իբրև թշնամական քայլ, ուղղված կանխամտածօրէն Ռուսաստանի և դաշնակիցների դէմ»:

◆ Ռոտտէրդամում շուտով կայանալու է հրէական գործիչների միջազգային համագումար:

◆ «Р. Сл.» տուգանվեց 3000 ր. Բուկվայի «Среди обывателей» յօդուածը տպելու համար № 68-ում:

◆ Մոսկվայի Հայկական Կոմիտէտը վճռել է կազմել մի քանի թռուցիկ սանիտարական խմբեր, որի համար յատկացրել է 40,000 ռուբլի: Խմբերի կազմելու գործը յանձնարարված է Պիրոգովեան ընկերութեանը:

◆ Ժոֆֆրը Կոպէնհագէնում յայտնել է, որ շուտով ֆրանսիական զօրքերը կգրաւեն Բէլգիան և այնտեղից կուղղվեն դէպի Գերմանիա:

◆ Մայրաքաղաքի թերթերում տպված է ռուս գրողների պատասխանը անգլիացիներին: Պատասխանի տակ ստորագրել են Միլիւկով, Մ. Գօրկի, Բունին, Լ. Անդրէեվ, Կոնի և այլք:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 մարտի

ԹԵՀՐԱՆ.— Պարսկաստանի և Թիւրքիայի միջև վերջին օրերը ծագեց միջադէպ, որ մտատանջութեան մէջ ձգեց պարսից կառավարութեանը, որ ցայսօր բառիս բուն նշանակութեամբ անգործ էր յօգուտ Թիւրքիայի, որը և սպառնում է դրանից օգտվել այժմ:

Միջադէպը ծագեց Քիւրդստանի սահմանամերձ ցեղերի և պարսից իշխանութիւնների միջև ծագած երկպառակութիւնների հողի վրա՝ քիւրդական կէլխուր և սենջաբի ցեղերի պարագլուխներին ձերբակալելու պատճառով:

Սահմանամերձ Թիւրք զօրքերի պետը Քիրմանշահի նահանգապետ Էմիր Մոֆախամից պահանջեց՝ ուլտիմատումի ձևով՝ ազատել ցեղապետներին և յանձնել նրանց ձերբակալող պարսից իշխանաւորներին, սպառնալով շարժվել Քիրմանշահի վրա: Մոֆախամի կտրուկ մերժման պատճառով, Թիւրքաց մի խոշոր զօրամաս, համաձայն այսօր ստացած տեղեկութիւնների, անցել է պարսկական սահմանը և գրաւել է Կասբիշիրինը:

Թեհրանի կաբինէտը քայլեր արաւ Թիւրքաց դեսպանատան առաջ և յոյս ունի, թէ միջադէպը կը հարթվի և Թիւրքիան ետ կը կանչէ իր զօրամասը:

ԴԵՊՔԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 մարտի

ՀՌՕՄ.—Առաւօտեան քաղաքը ընդունեց պատերազմական բանակի տեսք: Հրապարակները, գլխաւոր փողոցները, գերմանական և աւստրիական դեսպանատների շինութիւնները և այն տունը, որի մէջ բնակվում է Բիւլօվը, պաշտպանում էին կարաբինէրները, ոստիկանութիւնը և հեծելազօրը, որովհետև յայտնի էր դարձել, թէ չէզոքութեան և միջամտութեան կողմնակիցները մտադիր են ժողով գումարել, հակառակ արգելքի:

Կէսօրվայ ժամը 3-ին ամբոխը փորձեց ժողովվել կայարանի մօտի հրապարակի վրա, բայց ցրվեց: Կատարվեցին բազմաթիւ ձերբակալութիւններ:

Օրվայ ընթացքում մի քանի տեղում եղան ընդհարումներ ոստիկանութեան և ամբոխի միջև, որ փորձում էր մտնել այն տանը, որի մէջ բնակվում է Բիւլօվը:

Ի թիւս այլոց ձերբակալվել են «Պոպոլօ-Իտալիա» լրագրի խմբագիր Մուսսոլինին և յայտնի ֆուտուրիստ Մարինէտտին: Հիւսիս-Գերմանական Լլօյդի շինութեան պատուհանները ջարդված են:

Շատ քաղաքներից հեռագրում են տեղի ունեցած միտինգների մասին:

ԲՈՒԼՂԱՐ ՀՐՈՍԱԿԱԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 մարտի

ՆԻՇ.—«Պրէսս-Բիւրօն» յայտնում է. «Հրոսակախմբերի յարձակումները շարունակվում են նոյն իսկ Ստրումիցայի դէպքերից յետոյ: Այսպէս, մարտի 24-ին երեկոյեան նրանք յարձակում գործեցին Ջանօկի զինապահեստի վրա: Սերբերը ստիպված էին նահանջել իրանցից թւով գերազանց հրոսակախմբերի առաջ, բայց վերջիններին պատճառեցին խոշոր կորուստներ, մինչ իրանք կորցրին մի զինւոր վիրաւոր:

Միևնոյն օրը մի ուրիշ հրոսակախումբ մօտեցաւ Մուշկով գիւղին, բայց վանվեց Բուլղարիայի սահմանները: Դեռ սկզբում էլ ուրիշ հրոսակախմբեր անցան սերբիական սահմանը: Հրոսակախմբերի մօտ կան թիւրքական սիստեմի հրացաններ: Նրանց ղեկավարներ հանդիսանում են թիւրք և բուլղար օֆիցէրներ: Լսողների պատմելով, հայդուկները հաւաստիացրել են թիւրք ազգաբնակութեանը, թէ եկել են տանելու նրան մինչև Մակէդոնեան սերբերից խլելը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք՝ 1) «Кавк. Слово» թերթի գրասենեակից, յանձնելու Նպաստամատոյց Ընկերութեան, 100 ր., 2) Մոսկվայից, գթութեան եղբայր Արշ. Կարապետեանի միջոցով, հանգանակված տեղ. լազարէթի հայ և ռուս զինւորների շրջանում (ցուցակը կը տպվի), 53 ր. 20 կ., 3) Սումիից, Սողոմոն Ոսկեանից 50 ր., 4) Թիֆլիսում, Ջաւադ Խաչատրեանից 2 ր., 5) Թիֆլիսում, Պ. Բ.-ից 10 ր., 6) Եկատերինօդարից, Մարտանսկայա կայարանից, Սեդրակ Զախարովիչ Զօլաքեանից, հանգանակված (ցուցակը կը տպվի) 1127 ր., 7) Բագուից, Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի միջոցով, յանձնելի Նպաստ. Ընկերութեան, 1200 ր., 8) Շուշուց, Թէոդորոս Գրիգորեանից 10 ր., 9) Բագուից, «Баку» թերթի գրասենեակից, Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի միջոցով, յանձնելի Նպաստ. Ընկեր. 524 ր. 11 կ.: Գումարը 3076 ր. 31 կ.: Նախորդ ստացված 23,980 ր. 99 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 60) ստացել ենք 27,057 ր. 30 կ.:

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻ ՓՈՔՐԻԿ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս անհատը փորձութեան ժամերին է ճանաչվում, նոյնպէս և ազգերի բարոյական և մտաւոր կորովը, կուլտուրականութիւնը աւելի ցայտուն կերպով երևան են գալիս պատմական խոշոր դէպքերի ժամանակ, օրինակ պատերազմի, յեղափոխութեան և այլն:

Հայ ազգը անցեալում փայլուն օրինակներ շատ է տուել. վկայ է պատմութիւնը, որը թերթելիս իւրաքանչիւր ընթերցող կարող է գտնել: Ներկայ համաշխարհային պատերազմը եկաւ մի փայլուն էջ ևս աւելացնելու այդ հրաշալի էջերի վրա: Նա ապացուցեց, որ հայը ևս կուլտուրական ազգերի բարեմասնութիւններից ետ չէ մնացել: Նա ապացուցեց, որ հայի համար ևս թանկ են ազատութիւնը, հաւասարութիւնը և արդարութիւնը, և՝ ընդհակառակը՝ ատելի է բռնութիւնը: Հայն այդ պատճառով ուղարկեց իր զաւակներին համաշխարհային պատերազմի բեմը այդ գաղափարների համար կռւելու. Նա ապացուցեց, որ հայրենիքի ազատագրութիւնը բարբարոս թիւրք պետութեան ձեռքից՝ հարկաւոր է իր կուլտուրական զարգացման համար, ուստի իր զաւակներին ուղարկեց այն բանակը, որը սուրը պատեանից հանել է այդ պետութիւնը խորտակելու և նրա աւերակների վրա բարձրացնելու հայ նահատակ ազգի վերածնութեան դրօշակը: Հայն ապացուցեց, որ ինքն իբրև հպատակ և ազատ քաղաքացի ռուսաց մեծ կայսրութեան՝ ջերմ կերպով սիրում է վերջինիս և ցանկանում է նրա բարգաւաճումը, երջանկութիւնը և հզօրութիւնը, որ նրան, այդ կայսրութեան հասած ծանր փորձութիւններին ինքն ևս պատրաստ է ռուս ժողովրդի հետ միասին հայրենիքի սուրբ սեղանի առաջ զոհ բերել թէ իր զաւակներին և թէ իր բարոյական և նիւթական կարողութիւնը: Օրինակը յայտնի է: Եւ, վերջապէս, հայ ժողովրդի իսկական Դեմոսը ապշեցուցիչ անձնազոհութեան օրինակը տուեց այս վերջին արհաւիրքին, խնամելով, պատսպարելով իր յարկի տակ և կերակրելով 60,000 անտուն-անտէր փախստական եղբայրներին և քոյրերին:

Ի հարկէ այս ամենի մասին ապագայ անաչառ պատմաբանը աւելի մանրամասն կարձանագրի. այստեղ մենք միայն մի անգամ ևս հարկաւոր համարեցինք ընդգծել հայ ազգի այս կարևոր յատկութիւնը:

Մեր կարծիքով, որպէսզի ապագայ պատմաբանը կարողանայ ռէլիէֆ կերպով դուրս բերել հային այս պատմական րոպէում, անհրաժեշտ է արձանագրել հայի բոլոր դրական և բացասական կողմերը, թէկուզ ըստ երևոյթին չնչին էլ թւան: Այդ հիման վրա լռութեան չեմ կարող տալ մի դէպք, որը թէ մխիթարական է և թէ սըրտառուչ:

Փախստականների օրն էր Թիֆլիսում: Մի լուացարար կին, մի փոքրիկ կապոց ձեռքին զանգահարում է տ. Մ. Միլեանի բնակարանը և խնդրում է աղախնին յայտնել տիկնոջը, որ ինքը կամենում է տեսնել նրան: Յայտնվում է տիկինը:

— Ես լսեցի, որ դուք փախստականների համար նուէրներ էք ընդունում,—ասում է լուացարարը,—ի՞նչ կը լինի որ այս կապոցն էլ ընդունէք մեր չքաւորների կողմից:

Կապոցում եղել 1 ֆ. շաքար, $^1/_2$ ֆ. չայ, 6 պաչկա ծխախոտ, 5 արկղիկ լուցկի, 3 զոյգ գուլպայ, 4 զոյգ մանկական կօշիկներ: Լուացարարը առ ձեռն էլ յանձնում է 54 կ. դրամ:

Զգացված այս ժողովրդական ինքնաբուխ նուէրից, տիկինը շնորհակալութիւն է յայտնում բերողին և միևնոյն ժամանակ՝ մըտնելով նրա դրութիւնը՝ խորհուրդ է տալիս, որ տանի բոլոր բերածը ծախի և փողը իր երեխաների վրա գործադրի, բայց ինքը դրա փոխարէն ընկերութեանը կը վճարի 5 ր.:

Լուացարար կինը, տիկնոջ վերաբերմունքից վիրաւորված, յայտնում է, որ երևի տիկինը «լայաղ» չէ անում իրանից նուէր ընդունել, վախենալով որ իրանց կօշիկները կը հաւասարվեն հարուստների 100 ռուբլիներին:

Դրանից յետոյ տիկին Միլեանը ընդունում է բերվածները և, շնորհակալութիւն անելով և սփոփելով նրան, ճանապարհում է տուն:

Ա. Դաւթեան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՂԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

V

Գիւղը լիապէս ներշնչվել է գթութեան ու ողորմածութեան ոգով:

Գիւղացիութիւնը զոհաբերում է կենսապահիկն աւելի՝ քան իր տնտեսական ներկայ պայմաններն են ներում:

Փոխադարձ օգնութեան բիւրեղացած զգացմունքը յորդանալով դուրս է ցայտում գիւղի ռէալ կեանքի կարելիութեան սահմաններից:

Այս մարդասիրական վեհ իղձն գիւղական միջավայրում պատուաստելու համար չէ պահանջվել աղմկալից թմբկահարում և ցնցող էֆեկտներ, ազատ է եղել պատէտիկ «կոչերից» ու շինծու քարոզներից:

Ժամանակակից գիւղում պատերազմի անհամար զոհերի ու հերոսների ընտանիքներին ապահովելու ծանրակշիռ խնդիրն իր բնական լուծման է ենթարկվել:

Գթութիւնն որպէս քաղաքացիական պարտք, բարոյական պահանջ, հոգու գաղտնի թելադրանք կրել է գիւղական աշխարհի առանձնայատուկ ստեղծագործութեան կնիքը:

Մեր լայնարձակ երկրում կա՞յ արդեօք մի կղզիացած համայնք, մոռացված շրջանում ընկած մի խուլ աւան, որին հասած չը լինի հայրենիքի ծով-ցաւերի լալահառաչ արձագանքը. կա՞յ արդեօք լեռների ծոցում թաղված մի գիւղական տնակ, որի դուռն ու լուսամուտն անընդհատ չը թակի հասարակական արթուն խղճի ուրուականը:

Գիւղացիութիւնը հարազատօրէն ըմբռնել է «աշխարհից մի-մի թել—տկլորին՝ մի շապիկ» ռուսական առածի բուն իմաստը:

Ներկայումս գաւառական աշխարհն իր սրտաբաց նուիրատուութեամբ մարդու հիացմունքն է շարժում:

Գիւղն իր առատաձեռն օգնութեամբ ձգտում է լցնել պատերազմի բազմապիսի կարիքների մեծ վիհը:

Գիւղը քաղաքից ոչ միայն յետ չի մնացել, այլ և այսօր հանդիսանում է նրա արժանաւոր մրցակիցը:

Այս անչափ ուրախալի երևոյթից յետոյ զարմանալի չէ այն եզակի փաստը, որ պատերազմի առաջին կիսամեակում հազարաւոր փախստականներին հասած օգնութեան $^5/_8$ մասը արել է մեր բազմաչարչար գիւղացիութիւնը, իսկ մնացած աննշան մասը՝ հարուստ ու փարթամ քաղաքները:

Գիւղը դարձել է մի առատաբուխ աղբիւր, որից հոսում են դէպի ժողովրդական կարիքի ծովը կենսական անհամար բարիքների հեղեղները:

Գթութեան օրերը գիւղական կեանքում ծովացած զգացմունքների, փոթորկալից յոյզերի և ալեծածան ապրումների անմոռանալի օրեր են:

Դ... գիւղում կամաւորների ու փախստականների օգտին հանգանակութիւն է:

Հասարակութիւնն այդ մասին վաղուց նախապատրաստվել է:

Գիւղական թաղերում շրջում են տեղական «պաչօտնիքը»...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԵՂՋԻՒՐԸ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ԱՊԱԳԱՆ*)

Չկայ բան մը, նոյն իսկ ներկայ օրերու մեծամեծ պատահականութեանց մէջ, որ աշխարհի երևակայութեան վրայ այնքան զօրեղ կերպով ազդած ըլլայ, ինչպէս Կ. Պոլսոյ վրայ կատարուող արշաւանքը: Ամեն ինչ միացած է՝ աշխարհի ուշադրութիւնը գրաւող այդ դէպքին վսեմութիւն մը և վիպական երևոյթ մը տալու համար: Անտեղի երևակայութիւն մը չէ անոր մէջ տեսնել արդի նմանութիւն մը այն աւանդութեան, որով հելլենական նաւատորմիղը անցնելով այդ միևնոյն ծովերէն կը դիմէր Տրոյ՝ փըրկելու համար Ագամեմնոնի առևանգուած հարսը:

Այնտեղ՝ Ոսկեղջիւրի քովը նստած է աշխարհի և քրիստոնէութեան յափշտակուած հարսը, գեղեցիկը քաղաքներու մէջ, ինչպէս որ հելլէնուհին էր գեղեցիկ՝ կանանց մէջ: Չորս ու կէս դար Մուհամմէդի տանը տիրեց անոր, զոր հիմնեց հռոմէական կայսրութեան առաջին քրիստոնեայ կայսրը և որու հիմքին մէջ միւս քաղաքներէն աւելի Քրիստոսի կրօնքի յաղթանակը կը տեսնենք: Գրեթէ հազար տարի Մեծն Յուստինիանոսի կառուցած մայր եկեղեցին կրեց խաչը և կամարներուն տակ հնչեցուց քրիստոնէական պաշտամունքը: Բոլոր դարերու ընթացքին, զանազան անուններու տակ, Բիւզանդիոն, Կոստանդնուպօլիս, Նոր Հռոմ, ան մնաց քրիստոնեայ աշխարհի երկրորդ մայրաքաղաքը և յոյն ու հռոմէական եկեղեցիներու բաժանումէն վերջ դարձաւ օրթոդոքս դաւանութեան անվիճելի կեդրոնը:

Յետոյ, երբ Անգլիան իր ներքին կռիւներով զբաղած էր, Թիւրքը հեղեղի պէս եկաւ և կլլեց զայն, և գրեթէ 500 տարի կիսալուսինը կը ծածանի Մեծն Կոստանդիանոսի հիմնած քաղաքին վրայ: Քաղաքական տեսակէտով Կ. Պոլսոյ անկման նշանակութիւնը գիտենք: Իր անզուգական դիրքը Եւրոպայի և Ասիայի սեմին վրայ պէտք էր զայն հին աշխարհի տիրուհին դարձնէր, բայց Թիւրքը խորշակահարեց, և այդ խորշակի տակ մնաց հաշմ և անօգնական, ժանտախտի և ապականութեան բոյն մը: Եւ այժմ վերջապէս փրկութեան ժամը հնչեց: Թնդանօթներու որոտումը Դարդանէլի մէջ կաւետէ մեզ մօտալուտ ազատութիւնը: 1453 թուին Կ. Պոլսոյ վրայ տիրած խաւարը փարատելու վրայ է: Մի նոր օր պիտի ծագի պատերազմի ծուխին և աղմուկին մէջէն: Վայել է և բարեգուշակ, որ առաջի վճռական արդիւնքը այս հսկայ կռուին, որուն մէջ խրուեցաւ աշխարհ, լինի փրկութիւնը դարերէ ի վեր գերուած այս քաղաքի և օսմանեան պետութեան ցնցոտիներու անհետացումը Եւրոպայի ափերէն: Աշխատանքը մեր կարծածէն շատ աւելի մեծ է: Բայց յաջողութեամբ պիտի վերջանայ եթէ ոչ այս ամիս, եկող ամիս: Վերջապէս այս տարի, հինգ դարերէ վերջ, ս. Սոֆիայի մեծ գմբէթի տակ պիտի հնչեն քրիստոնեայ եկեղեցւոյ արարողութիւնները:

Երբ կը տիրանանք Կ. Պոլսոյ, որու հսկողութեան պիտի յանձնուի իր ճակատագիրը: Յոյժ կարևոր խնդիր մըն է այս, որովհետև Կ. Պոլսոյ ճակատագիրը լոկ ազգային կամ նոյն իսկ կրօնական նշանակութիւն ունեցող խնդիր մը չէ, բովանդակ աշխարհի շահերը շօշափող խնդիր մըն է: Ըսողներ պիտի ըլլան, թէ պատերազմէն վերջ, ի շարս ուրիշ խնդիրներու, անոր ճակատագիրն ընդհանուրի քննութեան պիտի յանձնուի: Այդպէս ալ պէտք է ըլլայ: Բայց այժմէն ծրագիրներ կը մշակուին, և «Spectator» շտապեց Կ. Պոլիսը Ռուսիոյ յանձնել առանց ոևէ պայմանի և երաշխաւորութեան, և կարծես նուէրը ուշացուցած ըլլալուն համար ներողութիւն անգամ խնդրելու երևոյթ ունի:

Բայց խնդիրը «Spectator»-ի կարծածին չափ պարզ չէ: Անգլիոյ մէջ չկայ կուսակցութիւն մը այսօր, որ չդատապարտէր՝ «մենք չենք ուզեր կռուիլ» այն առեղծուած ջինգօ քաղաքականութիւնը, և նոյն իսկ լորդ Սօլսբըրի ժամանակին խոստովանեցաւ, որ Դիզրայէլի «Սխալ ձիու» վրայ դրած էր իր գրաւը, և քաղաքականութեան հետևողները շատ լաւ գիտեն, որ այս օրուայ մեր գլխուն եկած փորձանքը այդ սխալ քաղաքականութեան արդիւնքն է: «Daily News» միշտ պայքարեցաւ այդ քաղաքականութեան դէմ և այժմ ալ չէ դադրած պայքարելէ: Ան ճանչցաւ Կ. Պոլսոյ վերաբերեալ Ռուսաստանի պահանջներուն բնական և իրաւացի ըլլալը: Այդ պահանջները երկու արմատ ունին, մին քաղաքական, միւսը կրօնական: Կ. Պոլիս օրթոդոքս եկեղեցիին համար սուրբ քաղաք մըն է և այդ եկեղեցւոյ հետևողները ամենէն շատ Ռուսաստանի մէջ են և ամենէն աւելի ջերմեռանդները:

Ինչպէս որ միջին դարու խաչակիրը կը տենչար ըլլալ պահապանը Քրիստոսի Սուրբ Գերեզմանին, այնպէս ալ այսօր ռուս գիւղացիին սրտին մէջ խոր արմատ ձգած է Այա Սոֆիայի տաճարին տիրանալու փափագը: Քաղաքական պատճառն ալ նոյնքան զօրեղ է: Իր ընդարձակ տարածութեամբ ռուսական կայսրութիւնը չունի սառոյցէ զերծ նաւահանգիստ մը: Բարեխառն ծովերու միակ ելքը Բոսֆորի և Դարդանէլի միջոցով է և այդ ելքի բանալին մինչև ցարդ գտնուած է այն պետութեան ձեռքը, որ սրբապղծած է իր սուրբ տաճարը: Հետևաբար ոչ միայն շատ բնական է, այլ և արդարացի, որ ան (Ռուսաստանը) իր սովաբեկ աչքերը յառէ իր լայնածաւալ կայսրութեան մէջէն Ոսկեղջիւրի կողքին սփռուած այդ փայլուն գոհարին վրայ: Ոչ մէկ մեծ պետութիւն կրնայ հանգիստ նըստիլ և չնուացանել իր մէջ ազատ ելքի այդ բուռն փափագը:

Այսքանով վերջացող խնդիր մը ըլլար, շատ քիչ բան կը մնար ըսելու: Բայց կան ուրիշ աւելի կարևոր նկատումներ: Պատմականօրէն՝ Ռուսաստանը Կ. Պոլսոյ վրայ պահանջ մը չունի: Պատմութեան տուած իրաւունքը Յունաստանին կը պատկանի: Դարերէ ի վեր Կ. Պոլիս եղած է յունական տիրապետութեան փառքը, յոյն եկեղեցւոյ և քաղաքական ազդեցութեան կեդրոնը: Նոյն իսկ այսօր իր բնակչութիւնը մեծ մասամբ յոյն է, և հաւանական է որ Թիւրքերուն հեռանալէն վերջ թւով պիտի գերազանցեն մնացեալ մահմեդական տարրը: Յոյնին միացնելու ըլլանք և հայը (այս պարագային կարող ենք) բացարձակ մեծամասնութիւն պիտի կազմէ: Եթէ նկատի պիտի առնուին վաղուց փայփայուած փափագները, ռուսներուն չափ յոյնն ալ զօրաւոր մրցակից մըն է: Ան ալ երկար տարիներէ ի վեր իր մէջ վառ պահած է իր կորսնցուցած գոհարը ձեռք ձգելու յոյսը: Առարկողներ պիտի ըլլան, թէ յոյնը փոքր է և իր ձայնը թոյլ: Բայց միթէ այս պատերազմը փոքր ազգութեանց իրաւունքներու համար չէ՞:

Երրորդ հետամուտ մըն ալ կայ, որու Կ. Պոլսոյ տիրանալու պահանջը աւելի բարեբաղդ հանգամանքներու մէջ նկատողութեան պիտի առնուէր: Եթէ առաջին բալկանեան պատերազմը վերջանար բալկանեան պետութիւններու դաշնակցութեամբ, որու մէջ մտնէին՝ Յունաստանը, Բուլգարիան, Սերբիան և՝ եթէ հնար էր՝ Ռումանիան, Կ. Պոլիսը այդ դաշնակցութեան մայրաքաղաքը դարձնելու առաջարկութիւնը ընդդիմութիւններու չէր հանդիպեր: Բայց անոնց իւրաքանչիւրի նախանձոտ փառասիրութիւնը թոյլ չտուաւ, որ ապրէր այդ դաշնակցութիւնը, և այսօր դժուար է վերականգնել զայն, որպէսզի հետամուտ լինի իր պահանջին:

Եթէ Յունաստանի և Ռուսաստանի պահանջները իրար կը չէզոքացնեն, աշխարհի պահանջն ալ այդ երկուքէն կը ճնշէ: Կ. Պոլիսը ազատողը Եւրոպան պիտի ըլլայ: Անգլիոյ և Ֆրանսիոյ թնդանօթներն են, որ կը խորտակեն Դարդանէլի ամրութիւնները և պարիսպները: Բայց ոչ Անգլիան և ոչ ալ Ֆրանսիան անձնական շահերու դիտաւորութիւններ չունին: Շատ մը ազգեր աչքեր յառած են անոր վրայ՝ Պետրօգրադէն, Բեռլինէն, Վիէննայէն, Աթէնքէն և Սոֆիայէն, բայց անոր վրայ աչք չեն տնկած ոչ Անգլիան և ոչ ալ Ֆրանսիան, որոնց ջանքերով պիտի ազատի և վերջ պիտի տրուի իր տխրագին ողբերուն: Իսկ այս ազատութիւնը կատարեալ չպիտի ըլլայ, թէ որ Կ. Պոլիս

---

*) Այս յօդուածին բնագիրը լոյս տեսած է „Daily News"-ի մարտ 13 թիւին մէջ: Հեղինակն է յիշեալ թերթի կարող աշխատակից A. G. G.

Շտապում եմ միանալ այդ խմբին։

Գիւղի ոլորապտոյտ անցքերի և ուղիների լաբիւրինթոսումն ենք։ Թզչափ փողոցների աջ ու ձախ կողմերում ընկած են կիսատարած խուղերի կոնաձև կտուրներ։

Մօտենում ենք հերթով մի տան դրան։ Փայտի մի քանի հարուածով յիշեցնում ենք տնւորներին մեր գալուստը։

Վայրկենապէս դուրս են նայում գեղջկուհիների ամօթխած դէմքեր, ուղղվում է դէպի մեզ մի անհամարձակ ձեռք. վերցնում ենք նուէրը մի փոքրիկ կապոց կամ մի քանի դրամ և հանդիսաւոր քայլերթով դիմում ենք հետևեալ անկիւն...

Գետնածածկ խուղերի մէջ բարձրանում է մի գիւղական հոյակապ շէնք։

Հասել ենք նրա մեծ սրահի դրան։ Կենդանութեան ոչ մի նշոյլ. կարծես շինվելուց անմիջապէս մի աներևոյթ ձեռք ընդմիշտ փակել է և ամայութեան դատապարտել։

— Է՜, վա՜խ,—լսում եմ Կարօ-Ջիզու խրագին ձայնը,—ափսոս, հազար ափսոս, ելից մի օրհնած օջախ էլ պակսեց. մի ն դուռ փակվեց. ծուխը պակասեց, մոխիրը հանգաւ, թոնիրը սառեց...

Խորհրդաւոր խօսքերը լարում են ուշադրութիւնս։

— Մարանենց տունն է,—շարունակում է նոյն տխրալից տոնով,—հլա մի կլոր տարի չի թամամել, որ Մեհրաբ-ամին, էր գեղի ճակատով տղամարդը, մի դաշիլ գետնով գնաց, մահացաւ։ Դեռ հլա ահողու վրա գեղովի թափած արտասուքը չի ցամքել, նրա ազիզների էրված սրտերը չեն հովացել, որ էս չէն օջախի չորս գիթները կաւի գնացին... Մի սուրբ խիղճ նացին անգլուխ ու անտէր, ձեռները ծոցը, րս պատերի արանքում. անգլուխ ու անտէր, հորերն ու գոմերը դատարկ... Էդ ա ոչինչ։ Ցավը Երանելու ցաւերը բիւղան թափվեցին էս սևարաղ տան կտուրով... եծ տղան՝ Ալէքը «գերմանիս» կռւում ընկաւ, միջնակն՝ Ալօն ջուխտ աչքերից կուրացած՝ բանիցումն ա. իսկ էն երկուսն, էնա ինգ ամիսա, որ ոտով գլխով կորած են, ն ու թօզը չը կայ...

Կարօ-Ջիզու անպաճոյճ պատմուածքը որապէս ազդում է մեզ վրա. սգապատ տանիքի անփարատելի վիշտը համակում է սիրտս. լուռ ու գլխակոր արագացնում ենք մեր քայլերը։ Դուրս գալով դժբաղդ ղոցից, մտնում ենք գիւղի հետևեալ թաղամասը։

Հանգանակութիւնը շարունակվում է նախկին եռանդով ու թափով։

Ամէն տեղ նոյն անկեղծ ոգևորութիւնը և նոյն սրտաբաց վերաբերմունքը։

Նախորդ տխուր տպաւորութիւնն աստիճանաբար մեղմացել է ու ցրվել՝ տեղի տալով թարմ մտապատկերների։

— Ախպէր, ախպէր,—լսվում է մեր ետևից մի կանացի ձայն։

Բոլորս էլ ետ ենք նայում։ Կանչողը մի առւ կին է։ Գիւղական մի պատկառելի նիս...

Մարանենց Գեօզալ-աղլն է... Դէմքը յլված ու վշտապատ, աչքերն արտաալից, ուռած ու կարմրած։ Հասնում է ։ Ամէն կերպ ճգնում է զսպել իր տանջած հոգու փոթորկալից յուզմունքը...

— Չէ՛, չէ՛, լա՛ւ չարէք, լա՛ւ։ Ասենք երկոր Տէրը չարացաւ մեզ վրա. օջախս նգցրեց, մոխիրս քամու տուեց. մնացի յ տալով սևաւոր գլխիս. գլխաւորիցս րկ, աղիզ բալէքիցս բաժան... Բա ձեր րմունքը ինչի՞ է նման։ Էնքան խեղճաւնք, սրտներս ժէռ քար կտրվեց, տներս աւերակ, որ միր կռւողների համար, մխ րանց չիւան ջանին մատաղ, մի բան էլա չը կարացինք տալ, որ գոնէ սրտներս հովացնենք... Առէք, ձեր եկած ճամբին սադաղ. առէք էս նախշուն գուլպաները. զանդուկումս պահելով ջանս դուրս եկաւ... Զօրսն էլ գնացին, էն վերան աշխարհը, նրանց թայերը ետ եկան, նրանք հէչ չերևացին... Տարէք, ղրկեցէք, թող նրանց ընկերախքը հագնին. վնա՜ս չը կայ, նրանք էլ իմ բալէքն են, նրանց «ազիզների» աչքերն էլա ճամբին, ձեռը ծոցը...

Դառն հառաչանքը խեղդեց նրա կոկորդը։ Կապոցը մեզ տուեց։ Խորշոմած դէմքի արտասուքը սրբելով հաստատ քայլերով ետ դարձաւ տուն...

Տեսարանից ցնցված ու քարացած՝ լուռ ու գլխակոր շարունակում ենք մեր ուղին...

Մ ե ծ - Ղ ա ր ա ք ի լ ի ս ա Репортеръ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նպաստամատոյց Ընկերութեան կազմակերպած միօրեայ հանգանակութիւնը, որ տեղի ունեցաւ մարտի 26-ին «Փախստականների օր» անունով, տուեց ընդամենը 6123 ռ. 41 կ.։ Դրամի համարելը վերջացաւ մարտի 30-ին երեկոյեան։ Ընդամենը գործառնութեան մէջ էին 293 տուփ, որոնցից գոյացաւ յիշեալ գումարը Թիֆլիսի 12 քաղաքամասերում։ Ամենաառատ տուփի միջից հանվեց 189 ռ. 71 կ. (III-րդ քաղաքամաս, Սօլօլակ), իսկ ամենաքիչ գումարն էր մի տուփի մէջ՝ 63 կոպէկ։ Միջին հաշւով իւրաքանչիւր տուփը տուել է 20 ռ. 90 կ.։ Ծախքերը ժէտոնի և գրքերի համար, ինչպէս և այլ ծախքեր, կը կազմեն մօտ 1000 րուբլի։ Այնպէս որ յօգուտ Ընկերութեան կը մնայ 5000 րուբլուց աւելի։

◆ Կովկասեան զինւորական շրջանի գլխաւոր պետ Ս. Վ. Վօլսկիի նախագահութեամբ և մասնակցութեամբ սանիտարական մասի Գերագոյն Պետի, զինւորական-բժշկական գլխաւոր վերատեսչի, Կովկասի բժշկական մասի կառավարչի և կովկասեան քաղաքների միութեան լիազօրների կայացաւ խորհրդակցութիւն՝ համաճարակ հիւանդութիւնների դէմ կռւելու մասին։ Քննվեցին նահանգապետների միջնորդութիւնները և նպաստներ յատկացվեցին նահանգներին վարակիչ հիւանդութիւնների դէմ կռւելու համար։ Խորհրդակցութիւնը պարզեց, որ բծաւոր տիֆը, բացի Կարսի մի քանի վայրերից, ամենուրեք թուլացել է։

◆ Ինչպէս յայտնի է, Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. քրեհով գիւղատնտեսական մեքենաներ է ձեռք բերել Երևանի և Թիֆլիսի նահանգի գիւղացիների կարիքների համար։ Այժմ էլ Ընկերութիւնը փորձնական դաշտեր է հաստատում յիշեալ նահանգների որոշ վայրերում։

◆ Ուրբաթ կը կայանայ միջվարչական խորհրդակցութիւն քաղաքին մթերք մատակարարելու մասին։ Այդ խորհրդակցութեան մէջ քննվելու են այն միջոցները, որ առաջարկված են խորհրդակցութեանը թանգութեան դէմ կռւելու մասին, և քաղաքային վարչութեան մշակած զեկուցումը։

◆ Փոխարքայի դիւանատանը առաջարկված է երկրի զեմստւային գումարներից որոշ գումար բաց թողնել զեմստւային թոշակաւորների թիւը աւելացնելու բուսաբանական դպրոցում. Ներկայումս գոյութիւն ունեցող թոշակաւորների երեք թիւը պէտք է հասցվի 10-ի։

◆ Ոստիկանապետը հրաման է արձակել ոստիկանական պաշտօնեաներին՝ հսկել փողոցների մաքրութեան վրա և հարկադրել տնատէրերին կատարելու իշխանութեան պարտադիր որոշումները։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխ. Սումբատով Բաթում է ուղարկել զօրականներին բաժանելու այն իրերի մի մասը, որ նա ստացել է Մոսկվայից, ազնուականութեան պարագլուխ Ա. Դ. Սամարինից։

◆ Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը էլեկտրաքարշի վագոնները երթևեկելու են հետևեալ կարգով. վագոնները գործելու են դուրս գալու առաւօտեան $6^1/_2$-ին, իսկ վերջին վագոնները երեկոյեան կայան են գնալու երեկոյեան ժամը $11^1/_2$-ին։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղաքային կենտրոնական կօմիտէը ստացել է մարտի 1-ից մինչև 15-ը զանազան անձերից ու հիմնարկութիւններից 13,898 ռ. 29 կոպէկ։

◆ Ստացանք 1) «Բազմավէպ» ամսագրի 1915 թ. յունվարի №-ը, 2) «Ժամանակակից երգեր» գրեց Մկրտիչ Տալեան, էջ 30, գինն է 10 կոպէկ։

—

ԿՈՎԿԱՍ

◆ «Баку»-ում տպված է հետևեալը. «Բագուի քաղաքապետը կովկասեան զինւորական շրջանի գլխաւոր պետ. գեն. Վօլսկիից ստացել է հեռագիր այն մասին, որ անպայման արգելվի փախստականներին դուրս գնալ Կովկասի սահմաններից մինչև պատերազմական գործողութիւնների աւարտումը, ըստ որում փախստականները կարող են ապրել Թիֆլիսի, Երևանի և Գանձակի նահանգներում։ Չը ցանկացողները կարող են վերադառնալ հայրենիք։ Հայրենիք վերադառնալու գործը թեթևացնելու նպատակով արդէն կարգադրութիւն է արված սահմանի իշխանութիւններին այն մասին, որ նրանք անարգել ճանապարհ տան սահմանն անցնելու փախստականներին, որոնց գոյքը առանց մաքսի պէտք է փոխադրվի»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменiи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

Ժողովածու Դիպլօմատիական Դօկումենտների։ Ռէֆօրմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ց10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

XXIII

Նարնջագոյն Գրքի 118-րդ դօկումենտը՝ մինիստր Սազոնովի հեռագիրն է դեսպան Գիրսին, դեկտ. 26-ին, որով պատուիրում է ի նկատի ունենալ բանակցութիւնների ժամանակ հետևեալ դիտողութիւնները.

Ընդհանուր վերատեսուչներին պէտք է պատկանի ոչ միայն իրանց ենթակայ վարչութիւնների պաշտօնեաներին հրաժարեցնելու իրաւունքը, այլև վարչական բարձր պաշտօնեաներ սուլթանի հաստատութեան ներկայացնելու իրաւունքը։

Ընդ. վերատեսուչների իրաւունքները և պարտականութիւնները, նախ քան առաւել մանրամասն հրահանգներ մշակելը, պէտք է որոշվեն ընդհանուր գրութեամբ, որի օժտով նրանք ներկայացնելու են իրանց սեկտորի քաղաքացիական իշխանութեան բարձր ինստանցիան։

Ցանկալի է համարվում դուրս ձգել ծանօթութիւնը այն մասին, թէ տեղական ժողովները և խորհուրդները պէտք է կազմված լինեն կիսով չափ մուսուլմաններից և ոչ մուսուլմաններից, միայն մինչև ցուցակագրութեան հաստատումը։

Ցանկալի է վերականգնել արդարադատութեան անկազմակերպութեան մասին եղած յօդուածը։

Ցանկալի է նոյնպէս պահել նախնական ծրագրի որոշումը՝ զինւորակոչութեան վիճակ հանելու մասին բնակութեան տեղերում։

Ցուցակում նշանակված չեն վիլայէթները, որոնցից կազմվում են երկու սեկտորները։

Մատնանշված ծանօթութիւնները համապատասխանում են այն ծրագրին, որը իր ժամանակին ձեռական հաւանութիւն էր գտել Գերմանիայից. այդ պատճառով չեն կարող բողոքի ենթարկվել նրա կողմից։

119-րդ դօկումենտը՝ դեսպան Գիրսի հեռագիրն է Սազոնովին, դեկտ. 27-ին, որով յայտնում է, թէ վերոյիշեալ դիտողութիւնները անկասկած համապատասխան են նախորդ ծրագրերի հետ, բայց այդ ծրագիրները, կամ բացառապէս 6 կէտերից բաղկացած ծրագիրը, երբէք չեն ընդունվել պաշտօնապէս Բ. Դռան կողմից և միայն բանակցութիւնների ժամանակ այդ կէտերը փոխվել են ըստ ձևին։ Եւ որովհետև ոչ գերմանական դեսպանը, ոչ միւս դեսպանները մտադիր չեն և հրահանգ չունեն իրանց կառավարութիւններից աւելի առաջ գնալ իրանց պահանջների մէջ ռէֆօրմների վերաբերմամբ, ուստի նա երկիւղ է կրում, որ ինքը միայնակ մնայ և ռուսական կառավարութիւնը ստիպված լինի միայնակ հանդէս գալ, կրելով դրա բոլոր հետևանքները, այն է Բ. Դռան յամառութեան դէպքում՝ դիմելու րէպրեսիվ միջոցների։

120-րդ դօկումենտը՝ Էրզրումի հիւպատոս Ադամովի հեռագիրն է դեսպան Գիրսին, դեկտ. 29-ին, որով յայտնում է, թէ այդտեղ կայացող գաղտնի ժողովներում խօսում են հայերին կոտորելու մասին։ Մոլլաների հրամանով, մուսուլմանները գլխին դրել են սպիտակ չալմաներ. ըստ լուրերի, ամեն բան պատրաստ է կոտորածի համար և միայն սպասում են ազդանշանի մայրաքաղաքից։ Իթթիհադի կուսակցութեան անդամները յայտնապէս ստորագրել են տալիս բողոքագիր եւրոպական կօնտրօլի դէմ, կանխապէս մեծ պետութիւնների վրա ձգելով կոտորածի մեղը այն դէպքում, եթէ նրանք միջամտեն ռէֆօրմների դէպքում։ Ցանկալի է վճռական միջոցներով կոտորածի առաջն առնել։

121-րդ դօկումենտը՝ Սազոնովի հեռագիրն է դեսպան Գիրսին դեկտ. 29-ին, որով հաղորդում է, թէ գերմանական դեսպան Պուրտալէսը յայտնել է իրան, որ վերջին բանակցութիւնների ժամանակ Բ. Դռան հետ հայկական ռէֆօրմների մասին նա, Գիրսը, իբր թէ նոր պահանջներ է դրել, որոնք չէին մտնում այն նախնական ծրագրի մէջ, որ Գերմանիան պաշտպանում էր։ Ինքը պատասխանել է գերմանական դեսպանին մի յիշատակագրով, որով հերքել է այդ մեղադրանքը և ցոյց է տուել, թէ որպիսի մեծ զիջումներ է արել Ռուսաստանը ռէֆօրմների ծրագրի վերաբերմամբ։ Սակայն, եթէ Բ. Դուռը դարձեալ ընդդիմադրութիւն ցոյց տայ, Սազոնովը որոշ ազատութիւն է տալիս Գիրսին դեկտ. 26-ի հեռագրով ցոյց տուած կէտերի պաշտպանութեան վերաբերմամբ։

122-րդ դօկումենտը՝ վերոյիշեալ յիշատակագիրն է, որ Սազոնովը ուղղել է դեկտ. 29-ին Պետրօգրադի գերմանական դեսպանին։ Այդ յիշատակագրի մէջ Սազոնովը ցոյց է տալիս փաստերով, որ ռէֆօրմների այն ծրագիրը, որ մշակվել էր նոյեմբեր ամսին և որը ռուսաց կառավարութիւնը ընդունել էր իբրև զիջումների ամենավերջինը, ենթարկվել է Բ. Դրան կողմից շատ կարևոր ջնջումների, ուստի և ինքը պարտք էր համարել մատնացոյց անել այդ ջնջումների վրա և պատուիրել էր դեսպան Գիրսին պնդել ջնջվածների վերականգնման վրա։

123-րդ դօկումենտը Սազոնովի հեռագիրն է դեսպան Գիրսին, դեկտ. 31-ին, որով առաջարկում է ազդարարել Բ. Դրանն այն վտանգը, որ կարող է ծագել, եթէ նա միջոցներ ձեռք չառնէ խափանելու անկարգութիւնները հայկական վիլայէթներում, և անել նրան ամենավճռական ներշնչումն։

124-րդ դօկումենտը այն հեռագիրն է, որ Սազոնովը ուղղել է Անգլիայի և Ֆրանսիայի ռուսական դեսպաններին, նոյն օրը, պատուիրելով առաջարկել անգլիական և ֆրանսիական կառավարութիւններին՝ նոյն ազդարարութիւնը անել Թիւրքիային։

(Կը շարունակվի)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական Ներկայացում

«Դաւիթ-Բէգը» փոխադրված դրամայի բեմական ռեպերտուարի այն անաջող հատուածներից մէկն է, որի մասին երկու կարծիք լինել չէ կարող։ Դրամայի վեց գործողութիւններից միայն առաջին երկուսը կարելի է լսել հետաքրքրութեամբ, առանց ձանձրոյթի։

Գեղեցիկ էին առաջին գործողութեան այն տեսարանները, երբ Մելիք-Դաւիթի աղջիկը՝ Սիւրբին հրաժարվում է ընդունել իր ուրացող հօրը, կամ երբ Սիւրբին իր սիրած Ստեփաննոսին և միւս հայ գերիներին փրկելու համար գործ է դնում իր ամբողջ հմայքը Ցաթալի-խանի վրա՝ գերիների համաձայնութիւնը ստանալու համար։ Տպաւորիչ էր նաև այն տեսարանը, երբ Սիւրբին և Անհէզը՝ հայ նեռքինին՝ օրհնում էին պատանի Դաւիթին ապագայի յոյսով։

Այդ տեսարանների աջողութեանը նպաստում էր Սիւրբի—տ. Դուրեան-Արմէնեանի ոգևորված խաղը և մասամբ էլ Նեռքինի—պ. Ահարոնեան-Օվեի—խաղալու պարզ, անպաճոյճ ձևը։ Լաւ էր նաև այն տեսարանը, երբ Սիւրբին և Նեռքինին յանդիմանում էին ուրացող, եկեղեցուն և ժողովրդին դաւաճանող Մելիք-Դաւիթին։ Պէտք է ասել, որ շատ աջող կատարեց պ. Լազա Մելիք-Դաւիթի դժուարին դերը։

Լաւ էր նաև, կենդանի ու բնական Բայանդուր իշխանի—պ. Ստեփանեանի—խաղը։

Լաւ էր պ. Զարիֆեան Դաւիթ-Բէկի դերում, բացի այն ձանձրալի տեսարանից, երբ նա բացատրվում էր իր սիրած արքայազն վրացուհու՝ Թամարայի հետ։

Առանձնապէս ձանձրալի էր դրամայի հինգերորդ գործողութիւնը։

Թատրոնում սակաւաթիւ հասարակութիւն էր ներկայ։ Դ—Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՈՂՋՈՒՆԵԼԻ Է

Երկու միջոց կար Բագուի հայ դերասանական խմբի և հայ գրող Լէօի միջև ծագած վէճը լուծելու համար—ընկերական դատ, որ պարտաւոր էր իր վրա վերցնել Հայ Գրողների Ընկերութիւնը կամ, պետական դատարան։ Չը գիտեմ ինչու վիճող կողմերը գերադասել են վերջինը։

Լաւ են արել նրանք թէ վատ—դա այլ խնդիր է, բայց քանի որ արել են, քանի որ գործն արդէն դատախազի ձեռքումն է և երկու կողմերն էլ ունեն իրանց փաստաբանները, ես կարծում էի, որ նրանք կը լռեն և կը սպասեն դատարանի վճռին։ Թւում էր ինձ, որ նրանք մանաւանդ պիտի լռեն, աչքի առջև ունենալով որ ներկայ ծանր հանգամանքներում շատ էլ ներելի չէ մամուլը և հասարակական կարծիքը երկար ժամանակ զբաղեցնել մի թէև ըստ ինքեան սկզբունքային խնդրով, բայց ժամանակի ոգուն ոչ համապատասխան խնդրով։

Դժբաղդաբար, այդպէս չէ նայել գործին կողմերից մէկը, այն է Բագուի դերասանական խումբը։ Նրա ներկայացուցիչ պ. Արմէնեանը նորից մտել է լրագրական ասպարէզ և ճիգն է անում իրան չքմեղացնել, տպելով «Մշակի» № 64-ում մի քանի «դօկումենտներ», որոնք իբր թէ արդարացնում են իր վարմունքը մի գրական աշխատաւորի վերաբերմամբ։

Ես, իբր մէկն այդ վարմունքի դէմ հրապարակօրէն բողոքողներից, յայտնում եմ, որ նախ քան իմ բողոքը «Մշակի» խմբագրութեան յանձնելը՝ ես կարդացել եմ պ. Լէօի Արմէնեանին գրած նամակը, որով «Մելիքի աղջկայ» հեղինակը թոյլ է տուել խմբին իր վէպի փոխադրութիւնը ներկայացնելու, հաւատալով պ. Արմէնեանի ճաշակին։ Եւ հէնց այդ նամակն է, որ առիթ է տուել ինձ իմ բողոքը գրելու խիստ ոճով, և ահա թէ ինչու։

Պ. Լէօն դրամատուրգ չէ և ոչ միայն այս, նա թատերասէր էլ չէ, և բեմական արուեստը նրա համար երբէք չէ եղել զբաղմունքի առարկայ։ Նա ծանօթ չէ բնաւ հայ բեմին և հայ դերասաններին։ Եթէ ծանօթ լինէր, նա յամենայն դէպս այդքան միամտաբար չէր հաւատայ պ. Արմէնեանի ճաշակին և իր երկի փոխադրութիւնը նրա հայեցողութեանը չէր ենթարկի։ Նա, երևի, միայն մի բան է աչքի առջև ունեցել—Արմէնեանի երկարամեայ բեմական գործունէութիւնը։ Նա մտածել է. ահա մի դերասան, որ 12—13 տարի է ծառայում է բեմին, ունի փորձառութիւն, հետևաբար և ճաշակ, ուրեմն նա թոյլ չի տայ իմ երկն աղաւաղելու։ Եւ պ. Լէօն, դժբաղդաբար, կամ ճիշդն ասած՝ բնականաբար սխալվել է, անպայման հաւատալով պ. Արմէնեանի «ճաշակին»։

Արդ, ինչ է նշանակում այդ։ Որ այդ սխալով պիտի օգտվել և մարդուն շահագործե՞լ։ Եթէ ես իմ դերձակի ճաշակին ու բարեխղճութեանը հաւատալով պատուիրել եմ մի հագուստ և նա իմ հաւատը չէ արդարացրել, եթէ նրա կարած հագուստի թևերը կարճ են, օձիքը ծուռ, փէշերի մէկը երկար, միւսը կարճ, ուրեմն ես պարտաւո՞ր եմ անպատճառ վճարե՞լ դերձակին և նրա այլանդակ գործը հագնել։

Համաձայնվեցէք, որ այդ մի տրամաբանական անհեթեթութիւն է, հետևաբար իրաւաբանական տեսակէտից Լէօի նամակը չէ կարող ծառայել իբրև փաստ պ. Արմէնեանի վարմունքի արդարացման համար։

Գալով գործի բարոյական կողմին, պ. Արմէնեանը մեղաւոր է ոտքից մինչև գլուխ։ Ինչու։ Որովհետև եթէ Լէօն գտնում է, որ իր երկն աղաւաղված է, թէկուզ աղաւաղված էլ չը լինի, մենք պարտաւոր ենք յարգել նրա հայեցքը, որովհետև գործի տէրն ու պատասխանատուն նա է։ Մի Արմէնեան կարող է 18-դ դարի մի ամօթխած հայ գեղջկուհու ստիպել բեմի վրա մի թուրք բռնակալի առջև Սալոմէի պար պարել, և դա նրա ճաշակով կարող է «գեղարուեստական» համարվել, բայց Լէօն գտնում է, որ այդ պարը թէ աւելորդ է, թէ անհամապատասխան՝ ժամանակի ոգուն և հերոսուհու հոգեբանութեանը և թէ տգեղ։ Եւ մենք պարտաւոր ենք յարգել պ. Լէօի կարծիքը և ոչ Արմէնեանինը, առանց նոյն

էկ պետութեան ձեռքէն միւսին անցնի։ նչ պիտի ըլլայ հետևանքը այսպիսի գործողութեան։ Հին թշնամիները պիտի մնան, ղաքական մեքենայութեանց նոր ոստայն ը պիտի հիւսուի այդ քաղաքին շուրջը։ նայած տրուած խոստումներուն, նոր ամբութիւնները պիտի կառուցուին Դարդանէլի երակ ամրութիւններուն վրայ, զորս այսօր նգլիական նորագոյն 15 ինչանոց թնդանօթները հիմնայատակ կընեն։ Եւ որովհետև քաղաքական բարեկամութիւնները ջուրի էս անկայուն են, և այս տասնամեակի բարեկամները յաջորդ տասնամեակին կարող թշնամիներ դառնալ, մեր զաւակները և ները հաւանականաբար պիտի երթան րտակելու նոր ամրութիւնները, ինչպէս մենք այսօր կը խորտակենք կոր հիները։ թէ որ այս պատերազմը մարդկութեան մար աւելի լաւ ուղի մը պիտի բանայ, Պոլիսը պէտք է լինի առաջին խորհրդա նը այդ նոր ուղղութեան։ Ան պէտք է նայ ազատ քաղաք մը, ամենուն ծառան, բայց ոչ ոքի սեփականութիւնը. ան պէտք է լինի Եւրոպայի և Ասիայի մեծ ապարհի պահապանը, իր ազատութիւնը շխատորուած Եւրոպայի հաւաքական հեղինակութեամբ, իր Ջրերը հիւրընկալ ամենուն համար և իր ափերը ազատ՝ նորանոր ութիւններու և թնդանօթներու սպառնալիքէն։

Այս է արդար լուծումը և ատով ոչ ոք տուժէ։ Ի՞նչ են Ռուսաստանի օրինաւոր պահանջները Կ. Պոլսոյ վերաբերեալ։ կուզէ, որ Այա Սոֆիան օրթոդոքս եկեղեցին վերադարձուի և բարեխառն ծովերու ջնորդող դուռը բաց ըլլայ իրեն համար չ մի թագաւոր կամ պետութիւն իրանք ունենայ փակելու զայն իրեն առաջ։

Այս երկու պահանջներուն կատարեալ գոհացում կրնայ տրուիլ միջազգային հսկողութեամբ։ Ասոնցմէ անդին ոչ պատմական և ոչ ալ ազգագրական իրաւունք մը ունի։ Վերջապէս ինչպէս կարող է Ռուսաստանը պահանջել, որ իրեն տան՝ երբէք իրեն չը պատկանած քաղաք մը, որու բնակչութեան ոչ մէկ մասը կը կազմէ ինքը։ Եթէ պատմութիւնը և ազգագրութիւնը կարևորութիւն ունեցող պարագաներ են, այն ժամանակ Յունաստանը գերակշիռ իրաւունք ունի։ Որքան որ Ռուսաստանի հանդէպ անարդարութիւն պիտի ըլլայ Դարդանէլի բանալին և Կ. Պոլսոյ տիրապետութիւնը Յունաստանին յանձնելը, նոյնքան ալ անարդարութիւն պիտի ըլլայ աշխարհի հանդէպ և աղէտաբեր՝ ապագայի համար, եթէ Կ. Պոլիսը տրուի Ռուսաստանին։ Նոյն իսկ եթէ Կ. Պոլսոյ հարցը կարելի ըլլար անջատել, իրաւունք չկայ զայն յանձնելու պետութեան մը, որուն ոչ սահմանակից է, ոչ լեզուն կը խօսի և ոչ ալ աւանդութեանց մասնակից է։ Բայց խնդիրը անջատել կարելի չէ։ Կ. Պոլսոյ ապագան մեր ամենուս շահերը մօտէն շօշափող խնդիր մըն է, մանաւանդ այն պետութեանց, որոնք Միջերկրականի և Արևելքի մէջ շահեր ունին։ Մեծ խնդիրներ պիտի ծագին մօտիկ ապագային Պարսկաստանի, Հայաստանի, Միջագետքի և Սիրիոյ մէջ։ Այս խնդիրները մեծապէս պիտի տուժեն, եթէ Դարդանէլի ամրութիւնները քանդելէ վերջ՝ նոր ամրութիւններու քաղաքական հիմքերը դնելու ըլլանք։

Դարդանէլի բանալին և Կ. Պոլսոյ գահը ոչ մէկ պետութեան կը պատկանի։ Անոնք ընդհանուր Եւրոպայի և աշխարհի ժառանգութիւնն են։ Թոյլ չտանք, որ այդ ժառանգութիւնը ժամանակաւոր շահի մը հետ փոխանակուի, նոյնիսկ օգտաւէտ անգամ չէ և ոչ ալ Ռուսաստանի համար։ Մինչդեռ Կ. Պոլսոյ չէզոքացումով Ռուսաստանի պահանջներուն դրական գոհացում կրնայ տրուիլ, իսկ Կ. Պոլսոյ յանձնումը Ռուսաստանին՝ նոր փորձանքներու և խառնակութիւններու առիթ պիտի տայ։ Բալկանեան պետութիւնները, որոնք իր կայսրութեան և Կ. Պոլսոյ միջև միջանկեալ պիտի մնան, վերջին ռուս-թիւրքական պատերազմէն ի վեր մեծցեր, ընդարձակուեր են։ Անոնք արդարև այժմ իրարմէ բաժնուած են, բայց ժամանակը պիտի միացնէ զանոնք, և բալկանեան դաշնակցութիւնը հանգիստ դրացի մը չպիտի ըլլալ ռուսացած Կ. Պոլսոյ համար։

Կ. Պոլիսը ազատ քաղաք մը դարձնելու բարոյական նշանակութիւնը ամենէն աւելի աշխարհի ուշադրութիւնը պէտք է գրաւէ։ Գերութեան շղթաները խորտակուելու վրայ են, և աշխատինք, որ ապագային ևս Կ. Պոլիս կանգնի միայ աշխարհի կառավարչութեան մէջ որպէս նոր իդէալի մը խորհրդանշանը՝ ներկայացնելով ազգերու ընդհանուր շահը, փոխանակ դառնալու իւրաքանչիւրի փառասիրութեան առարկան, և թող այդ ծովը բլուրներուն վրայ փայլի, երկար խաւար գիշերներէ յետոյ, մարդկային լաւագոյն յարաբերութեան բոցավառ արշալոյսը։

Թող չըլլայ այլևս Կ. Պոլիսը հին ցաւերու քաղաք մը, այլ խաղաղութեան և լոյսի նշան մը բոլոր աշխարհի համար։

Թարգմ. Տ. Գույումճեան

Մ օ ս կ վ ա

իսկ քննելու, թէ որն է նրանցից իրաւացի։

Ես չեմ ուզում երկարացնել։ Ուզում եմ միայն ասել, որ պ. Արմէնեանի՝ «Մշակի» 64-դ համարում տպած «դոկումենտները» իմ աչքում գրոշի արժէք չունեն, չեն կարող ունենալ և ոչ մի մտածող մարդու աչքում։

Այդ տեսակ «դոկումենտներ» միայն աչքերով մտածողներին կարող են մոլորեցնել։

Մի քանի խօսք այն հանրային բողոքագրի մասին, որ տպվեց «К. С.» լրագրում 28 յայտնի անձնաւորութիւնների ստորագրութեամբ և ունեցաւ խոշոր ազդեցութիւն։ Չեմ կարծում, որ երբևէ հայ հասարակութիւնն աւելի գեղեցիկ մի ժեստ լինի արած իր մայրենի գրականութեան վերաբերմամբ, քան այդ բողոքը։ Դա մի վերին աստիճանի ուրախալի երևոյթ է, որ պարտաւոր են ողջունել ամենքը, որոնց համար գրականութիւնը որևէ արժէք ունի։ Մի երևոյթ, որ ապացոյց է, թէ, վերջապէս, հայ հասարակութեան մէջ կազմակերպվում է եւրոպական մտքով քաղաքակիրթ մի տարր, որ գիտէ՝ ինչ ասել է գրականութեան բարձրագոյն բարոյական արժէք։ Մի տարր, որի շնորհով միայն հայ գրողը կարող է քիչ թէ շատ ազատ շնչել մեր կեանքի այս նեխված մթնոլորտում։

Եւ զուր են այն ճիգերը, որ գործ են դրվում այդ բողոքը ստորագրողներին համոզելու՝ ետ կանգնել իրանց գեղեցիկ քայլից։ Շատ գեղեցիկ ասաց մի բժիշկ,—ստորագրողներից մէկը—մի ժողովում, ուր քննվում էին Լէօի և Արմէնեանի միջև եղած թղթակցութիւնը. «Այժմ ես երկու ձեռքով եմ ստորագրում մեր բողոքը»։ Նոյնը կրկնեցին և բոլոր ներկայ եղողները։ Եւ եթէ վաղը միւս ստորագրողներից մէկն ու մէկը դուրս գայ և իր ստորագրութիւնը ետ վերցնէ, նա իր բարոյական տկարութեան դատավճիռը կը ստորագրէ...

Ողջունելի է նաև Բագուի «Արեգ» լրագրի գեղեցիկ դիրքը ներկայ սկզբունքային վէճում։

Շիրվանզադէ

29 մարտի

ԲՈՂՈՔԻ ԱՐԺԷՔԸ

Դժուար թէ մի հեղինակ աւելի մեծագոյն հաճոյութիւն ստանայ, քան երբ որ իր անկապտելի իրաւունքները պաշտպանվում են հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների կողմից։ Լէօն այդպիսի բաղդի է արժանացել։ Մի շարք ինտելիգենտներ ազդու լեզուով (ռուսերէնով) արդարացնում են Լէօին և ոտնակոխ են անում նրա հակառակորդներին (Արմէնեանին և Ամիրագօյին), դրանց մէջ ծագած յայտնի վէճի առիթով։ Նրանք (բողոքողները) փոքրոգի էժանագին վրէժխնդրութեամբ լցված՝ բարձրաձայն կոչ են կարդում մեր հարուստ գրպաններին, որ սրանք չը գնան Թատրոնական տոմսակ առնելու, որպէս զի նիւթապէս վնասվեն Լէօի թշնամիները։ Թւում է, թէ Լէօն իր բարձրութեան գահոյքի վրա բազմած՝ Արամազդի ժպիտով պէտք է ընդունէ իրան ընծայված այդպիսի երկրպագութիւնները։ Բայց ոչ, բողոքողները հանդէս են եկել և՛ անժամանակ և՛ հարկաւոր արարողութիւնները կանխաւ չը հոգացած։

Խնդիրն սկզբում այսպէս էր դրված. արդեօք Լէօն արդա՞ր է թէ մեղաւոր իր տրտունջով, այլ և նրա հակառակորդներն էլ արդեօք ճշմարտութիւն են խօսում թէ սուտ են ասում, երբ որ նրանք պնդում են, թէ իբր իրանք ունեցել են Լէօից լիազօրութիւն և ազատ գործելու դոկումենտներ։ Բողոքողները այս բանը չեն քննում և ոչ դրամական հաշիւների մէջ են մտնում, որ խնդրի բուն ծանրակէտն է կազմում, այլ յախուռն կերպով կողմերից մէկը ճանաչում են անպայման անպարտ, իսկ միւսը դրոշմում են յանցաւորի աղուէսադրոշմով։

Հետևապէս մինչև այսօր դեռ դարձեալ միայն մի պատասխան է մնում խնդրի լուծման համար, այն է, թէ Լէօն կամ մեղաւոր է կամ արդար, իսկ Արմէնեանն ու Ամիրագօն կամ սուտ են խօսում կամ ճշմարիտ։ Արդ, արդեօք մի այսպիսի անստոյգ վճռով կարող է Լէօն գոհ մնալ, որ անշուշտ զուրկ չէ արդարախոհութիւնից, արժանապատւութիւնից և ինքնասիրութիւնից։ Ի՞նչպէս է պատահել, որ լուսամիտ բողոքողները հէնց այս կէտը մոռացութեան են մատնել։

Չէ, մենք տակաւին չենք վարժվել ըստ արժանւոյն գնահատել մարդ արարածի սրբազնագոյն և կենդանի զգացումները։

Սեդրաք Մանդինեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(Սեփական Թղթակցից)

Թաւրիզ, 16 մարտի

Մարտի 14-ին, Թաւրիզի մայր եկեղեցում կատարված պատարագից յետոյ, հայոց հանգստարանում սև հողին յանձնեցինք տ. մայրիկ Սրբուհի Ամատունեանցի մարմինը, որ հանգեաւ ի Տէր երեքօրեայ կարճատև հիւանդութիւնից յետոյ 64 տարեկան հասակում։

Բազմաթիւ յարգողներից Թաւրիզի Հայուհեաց Բ. Ընկ. վարչութիւնը, Զ. Նազարբէկեան և եւրոպացի Դիւսի ամուսինները դագաղի վրա դրել էին արհեստական ծաղիկներից շինված պսակներ։ Եկեղեցում, պատարագից յետոյ, առաջնորդական փոխանորդ Կարապետ քահ. Մանուկեան խօսեց հակիրճ դամբանական և, ըստ արժանւոյն դրուատելով հանգուցեալ տիկնոջ ընտիր բարեմասնութիւնները, Թաւրիզի Հայուհեաց Բար. Ընկ. մատուցած երկարամեայ և օգտակար ծառայութիւնները և այլն, յորդորեց հայ տիկնանց և օրիորդներին հետևել հանգուցեալի առաքինի վարմունքին։

Ի յարգանս հասարակաց մայրիկի հանգստարանի խնամակալութիւնը վայելուչ ընդունելութիւն կատարեց, հանգստեան վէմի մօտ բռնել տալով պարսկական շալերով փաթաթված մատուցարանը սպասաւորի ձեռքերում, որտեղ դրված էր ծխացող խնկամանը, երկու անդամների ներկայութեամբ։

Տիկ. Սրբուհի Ամատունեանի դագաղին տրված յարգանքը բոլորովին արժանի է նրա այն գործունէութեանն ու դիրքին, որ ունեցաւ Թաւրիզի հայ կանանց շրջանում. և արդարև վայել է, որ նրան «Մշակի» էջերում դասաւորենք այն հասարակական գործիչների շարքում, որոնք իրանց բազմօգուտ գործերով արժանի են համարվել հանրութեան ջերմ յարգանքին։

Սրբուհի Ամատունեան Երզրումի վիլայէթում Խնուսբերդի բնակիչ համեստ և բարեկեցիկ մի ընտանիքի աղջիկ էր, որ ընտանիքով բնակութիւն հաստատեց Երզրում, որտեղ ամուսնացաւ համադանցի վաճառական աղա Թադէոս Ամատունեանի հետ ու ապրեց Թաւրիզում։

Տիկ. Սրբուհին անգամ միջնակարգ կրթութիւն չունէր, որչափ ես լսել ու ստուգել եմ. նոյն իսկ 40 տարեկան հասակում նոր գրել ու կարդալ է սովորել, այնպէս որ՝ իր անձնական նամակները ինքն էր գրում, առանց ուրիշի օգնութեան, և առանձին սէր ունէր ընթերցանութեան։ Չը ստանալով հանդերձ այնու ամենայնիւ բաւարար կրթութիւն, նա շատ խելացի, ուշիմ և խոհական անձնաւորութիւն էր և այդ պատճառով վայելում էր ոչ միայն ինտելիգենտ հայ ընտանիքների առհասարակ, այլ և եւրոպացիների համակրանքն ու յարգանքը։

Տիկ. Ամատունեանը գնահատում էր ուսումն ու կրթութիւնը իբրև ժամանակակից պահանջ երկու սեռերի համար ևս. և այդ տենչերով տոգորված՝ իր աղջիկների կրթութեանը շատ հոգածու էր. մինչև անգամ նրանցից մէկին իր դրամական անձուկ միջոցներով ուղարկեց Շվէյցարիայի քաղաքը՝ Լօզան, ուսում ստանալու, այն անկուն համոզմամբ թէ՝ ինչքան տղաներին, նոյնքան ևս աղջիկներին է հարկաւոր կրթութիւն կամ գեղարուեստ՝ կեանքի պատահական դժնդակութեանց դէմ կռիւ մղելու զէնք ունենալու համար։

Մայրիկ Ամատունեանի տունը միշտ բաց է եղել ինտելիգենտ անձանց համար, որոնց ձեռքով կազմում ու կռփում էին կրթական և կուլտուրական ծրագիրներ։ Այդ տեղում առաջին անգամ ուշադրութիւն ընծայվեց կանանց ընկերութիւն հիմնել, օրիորդաց համար կար ու ձևի արհեստանոցներ բանալ. մանկապարտէզներ պահել և, ըստ հնարաւորութեան, ծխական ուսումնարաններին դրամական օժանդակութիւն անել և գաւառներում դպրոցներ բանալ։ Եւ ճիշդ որ՝ տիկ. Ամատունու և իր եռանդուն ընկերուհիների տենչն իրականանում է. 90-ական թւականներին առաջին անգամ հիմնվում է Թաւրիզի Հայ Բարեգ. Ընկերութիւնը, որն այնչափ փայլուն դեր կատարեց անցեալում. Ընկերութեան հիմնադիրներից էր Մայրիկը, որ 20 տարի ծառայութիւն մատուցեց յիշեալ օգտակար հիմնարկութեան, արհամարհելով մեր հայկական կեանքից արտացոլած ամեն խոչընդոտ։

1896—97 տարիների կոտորածներից ու գազանային սարսափներից Ատրպատական ապաստանած վանեցի և աղբակեցի գաղթականների դրութիւնը յայտնի է աշխարհին. այն ժամանակ աղքատախնամ մարմին գոյութիւն չունէր Թաւրիզում. գաղթականներին խնամելու ծանր գործը ընկել էր Թաւրիզի Հայուհեաց Ընկերութեան վրա. վարչութեան նախագահ Սրբուհի Ամատունեան շտապեց Սալմաստ՝ տեղ զգեստ և նպաստ բաժանելու խեղճերին. Թաւրիզում անձամբ էր այցելում գաղթականներին, դռնէ ի դուռ փող և իրեղէններ հանգանակում, փախստականներին կերակրելու և հագցնելու համար։ Տիկ. Ս. Ամատունեանի ունեցած յոյժ մարդասիրական վերաբերմունքի պատճառով իրաւամբ հասարակութիւնը նրան «Մայրիկ» անունը յատկացրեց և այդ օրերից սկսած նա կոչվում է Մայրիկ Ամատունեան, հասարակական մայր։

Մայրիկ Ամատունեանի անակնկալ մահը մի խոշոր բաց է Թաւրիզի հայ կանանց մէջ. հանգուցեալը հայ կնոջ օրինակելի տիպն էր, և երկար տարիներ նրա յիշատակը վառ կը մնայ Թաւրիզի հասարակութեան սրտում և կենդանի տիպար՝ տիկինների և օրիորդների համար։

Երկնային մխիթարութիւն եմ փափագում հանգուցեալ առաքինի տիկնոջ վշտացեալ ամուսնոյն և հարազատներին։

Խորին ակնածութեամբ եմ մօտենում հողթումբիդ, ով ազնիւ հոգի, դնելու իմ համբոյրի դրոշմը հողաթումբիդ, որ ամփոփում է նշխարներդ։

Գ. Զիլինկիրեան

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

(Սեփ. Թղթակցէն)

Ուստր, 14 յունվ. (ն. տ.)

Համեւրոպական պատերազմի սկիզբի օրէն ի վեր յակամայից՝ ընդհատեցի իմ թղթակցութիւններուս շարքը ու այսպիսով զրկուեցայ «Մշակին» իմ աշխատակցութեան համեստ բաժինը բերելու հնարաւորութենէն։

Թղթատարական հաղորդակցութիւնը պատերազմի առաջին օրէն իսկ խանգարուեցաւ, ու ամերիկեան կառավարութիւնը պէտք տեսաւ ծանուցանել հանրութեան թէ՝ պատերազմող պետութիւններու երկիրներն ուղարկուած նամակներուն ապահով իրենց տեղերն հասցնելու պատասխանատւութիւնը չի կրնար ստանձնել։ Իրաց այս վիճակը կուգար հաստատել սա իրողութիւնը թէ՝ համեւրոպական հրդեհի բռնկումով ոչ հաղորդակցութիւն Ռուսաստանի հետ անկարելի կը դառնայ։ Ուստի պէտք էր սպասել, մինչև որ թղթատարական հաղորդակցութիւնը կանոնաւորուէր և ապահովութիւն ներշնչուէր մեզ, թէ ուղարկուած նամակները անկորուստ կը հասնին իրենց տեղերը։ Դէպքերու այս հոլովումին տակ ես պահ մը մէկ կողմ դրի իմ գրիչը, մինչև որ հանգամանքները աւելի նպաստաւոր դառնային։

Հայաստան աշխարհէն հազարաւոր մղոններով հեռու և Ամերիկայի Միացեալ-Նահանգներու այլևայլ կողմերը վայրավատին հայութեան կեանքով՝ գիտեմ թէ մեր ռուսահայ եղբայրները կը հետաքրքրուին, վասն զի միանգամայն թէ՝ անոնք հայ ազգի ներկայ պատմական օրերուն կուզեն հասկնալ, թէ ովկիանոսէն անդին՝ ազատութեան մաքուր օդերուն մէջ ապրող նոր գաղթականութիւն մը, որպիսին է ամերիկահայը, ինչ կը մտածէ ընել և ինչ օրեր կապրէ։

Կարժէ, ուրեմն, որ ես տամ մէկ քանի տեղեկութիւններ այս հարցի մասին։

Պատերազմի հէնց սկզբի օրէն ամերիկահայը ուժգնապէս ցնցուեցաւ ու ինքզինքը գտաւ շատ լուրջ ու ծանր կացութեան մը դէմ։

Ամերիկահայ գաղթականութիւնը մինչ կը պատրաստուէր լուրջ գործունէութիւն մը սկսելու հայկական բարենորոգումներու ծրագրին ընդունուելէն ետք, յանկարծ համեւրոպական պատերազմը ծագեցաւ, ու բոլոր զոհ պիտի երթար՝ անխուսափելիօրէն՝ Հայաստանի բարենորոգմանց ծրագիրը։ Ստոյգ է, որ ամերիկահայը սկեպտիկօրէն մօտեցաւ բարենորոգումներու հարցին, համոզուած ըլլալով թիւրք կառավարութեան կեղծ ու պատիր խոստումներուն բացարձակ ոչնչութեանը։ Այսու ամենայնիւ ուզեց մի քիչ լաւատես լինել և, անսալով ազգային բարձրագոյն իշխանութեանց հրահանգին, պիտի աշխատէր, որ Հայաստանի ամայացած քաղաքներն ու գիւղերը լեցուէին իրենց երբեմնի աշխատաւոր բազուկներովը, որոնք ժամքերնէրու երկրին արդիւնաբերութեան ծառայողներ կը մնային հօս։

Գաղթականներու տուն դարձը դեռ հազիւ սկսած, վտարանդի հայորդիներու առաջին կարաւանը դեռ Հայաստանի արիւնոտ հողին վրայ չհասած՝ փոթորիկը փրթաւ, ահեղ ու արիւնալի փոթորիկ, որ իր թևերը պիտի տարածէր և դժբաղդ Հայաստանի գլխին։ Իրերու այս կերպ դասաւորումը կուգար տակն ու վրայ ընել ամերիկահայ գաղթականութեան ամեն ծրագիր, ամեն նախապատրաստական կարգադրութիւն։ Այժմ պէտք կը մնար գործունէութեան նոր ծրագիր մշակել ապագայ պատահականութեանց առջև կազմ ու պատրաստ գտնուելու, երբ թիւրք կառավարութիւնը նետուէր դէպի ընդհանուր պատերազմի գիրկը։

Պատերազմի սկզբի ամիսներուն, երբ տակաւին թիւրք կառավարութիւնը իր կեղծ չէզոքութիւնը կը պահէր, ամերիկահայը մտածեց իր կարողութեան սահմանին մէջ օժանդակել դաշնակից պետութիւններուն և ի մասնաւորի Ռուսիոյ, երախտագիտութեան ապացոյց մը տուած ըլլալու համար՝ թէ հայ ազգը խորապէս կը գնահատէ իր դարեն պաշտպան ու նեցուկ հանդիսացող պետութեանց մարդասիրական ծառայութիւնը։

Ամերիկահայուն օժանդակութիւնը՝ ի հարկէ պիտի սահմանափակուէր սոսկ նիւթական օգնութեան մէջ, անկարելի ըլլալով այլ կերպ զոհողութիւն, քանի որ ամերիկեան կառավարութիւնը, իբրև բացարձակ չէզոք պետութիւն, խստիւ կազդարարէր ընակչութեան ծայրայեղ քայլերէ զգուշանալ և պատճառ չդառնալ չէզոքութեան խանգարման։ Ու այս մտքով կատարուեցան մէկ քանի խորհրդակցութիւններ ազգային ղեկավար մարմիններու միջև, ու տակաւին գործը չձևակերպած՝ վրայ հասաւ ռուս-թիւրքական պատերազմը։

Ռուս-թիւրքական պատերազմի լուրը, դաժան ու անողոք, որքան ալ որ ճնշող տպաւորութիւն թողուց ամերիկահայուն վրայ և անոր հոգին մղձաւանջով համակեց, այնու ամենայնիւ այս լուրը վհատութիւն ու անյուսութիւն չկրցաւ յառաջ բերել գաղթականութեան մէջ, ընդհակառակը՝ պատճառ մը եղաւ ասիկա, որ գիտակից ամեն հայ, հայրենասիրական վեհ գաղափարով տոգորուած ամեն անձ լրջօրէն մտածէ իր պարտականութեան մասին, հայ ազգի լինել չլինելու կրիտիկական այս օրերուն։

Ազգային գերագոյն իդէալին ու դատին մօտաւոր լուծումը հրամայողական պահանջ կը դնէր ամեն հայի առջև կատարելու իր պարտականութիւնը և այդ ամեն բանէ բարձր ու ամեն նկատումէ վեր դասելու։ Թէ ո՞րքանով ամերիկահայը կրցաւ այս մտքին խորը թափանցել և թէ ինչ ձեռնարկներ եղան, այս մասին ես կը գրեմ յաջորդով։

Մաղաք Գ. Պէրպէրեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր.	երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր.	ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից—	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից—	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր.	առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. Ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—52

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առա ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնովսկայա փող № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան Սեմեոնովսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—49

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Ծախվում են
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրվա ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիքական տրիպէրի և բժշկութեան մասին, րեցեպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒԻ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տ սակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնութ. Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մի օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20
Այս երեք գիրքը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երեք հետևեալ գրքերը. 1) «Ակնկարմաքի շալվար» ծիծաղաշարժ վօդևիլ չափահասների համար (գինն 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Մի նոյն դագաղում», պատմուածք հայ-թիւրքական կ ներից, գլխաւորների նկարներով, գինն է 7.։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. ա ջաց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ դ՝ել նամակներում, հակառակ դէպքում պատասխ նատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէ՝ Тифлисъ. Се новская ул. № 9. Медицинскому фельдшеру Г. Есаянцу.
(հ.կ.) 327. 100—88

„ԱՐՇԱԼՈՅՍԻ ՁԱՅՆԵՐ"
Նոր ազգային երգարան
Հայրենասիրական ոտանաւորներով երկ բարեփոխված տպագրութեամբ՝ ԱՆԴՐԱՆԻԿի և բոլոր խմբապետների և իրանց ը նակների նկարներով։
Գինն է 40 կոպէկ։
Դիմել՝ Тифлисъ, Эриванская пл. Писчемажный магазинъ. К. Г. АРЗУМАНЯНЦ
Նոյնպէս և բոլոր գրավաճառներին։
Գումարով գնողներին լինում է զեղչ։
(չ. ու. կ.) 141. 10—

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ
Թիւրքահայաստանի Խարբերդի նահան Արաբկիրի Վախշէն գիւղէն, Թիւրք բան մէջ զինուոր եղբայրս՝ Կիրակոս Մ. Գաճեան Երզրումի Հասան-Կալէէն յղուած կովկ զօրաճակատին վրայ. ան հիւանդ էր ու զօր, երբ կը տեղեկագրէր ինձ պատերա նախօրեակին. այժմ հաղորդակցութ զուրկ մնացած եմ, աւաղ, չգիտեմ եղաւ և ուր կը գտնուի ան։
Կը խնդրուի ամեն անոնցմէ, որոնք որ ճանաչեն զինքը կամ զինուորական կեա մէջ և կամ հասարակական և կամ բնա ւառի ազգային ծանօթ անհատներ, որ Թիւրքահայաստանէն փախստականներ զինուորական դասալիքներ են և կամ գ վարուածներ են, կը խնդրուի ի սէր գութեան եթէ գիտեն յիշեալի մը, կամ մեռած ըլլալը, մեզ տեղեկագրեն տողով մը։ Մեր հասցէն հետևեալն է՝ M diross Kadjian, Maria Louiza Kaf Ceédineniee № 26. Sofia (Bulgarie)
190. 2—

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւնները
1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժիւնի, I և II հատորներ . . . . . 1 ր.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . . .
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . . .
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . . . .
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի . . . . . .
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի . . . 1 ր.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . .
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻ ՄԻ ԳԻՐ (վեվագրութիւն), Ստ. Մալխասեանցի .
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . .
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ Մ.-ի
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ և գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ և գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. . . . . 1 ր.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ, Արթիւր Միւլէրի, Թարգմ. Իս. Ցարութիւնեանի. . . . . . .
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եզեկեանի. . . . .
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . . . .
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի . .
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի .
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբինեանցի .
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զթենցի . . . .
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիրով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%.
(6) 0—5

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիր հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն.
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառ. Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել:
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐ ԳՆԵՐՈՎ:
Տելեֆօն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный.